

25-26(664-665)

27.08.2022

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականին եւ գիտարար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀՐԱՏԱՊ Է ԴԱՐՁԵԼ ՆՈՐՈՎԻ ՏԵՍԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿԱՆԸ

Օգոստոսյան խորհրդակցություններ



Նոր ուսումնական տարվա նախաշեմին մեկնարկել են ուսուցիչների ամենամյա օգոստոսյան խորհրդակցությունները, որտեղ քննարկվում են անցած ուստարվա արդյունքները և նոր ուսումնական խնդիրներն ու անելիքները:

Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում օգոստոսի 26-ին տեղի ունեցած ուսուցիչների խորհրդակցությանը ներկա էին ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը:

Ներկաները նախ լսեցին Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Թերեզա Ղարախանյանի հաշվետվությունը օրակարգային հարցի վերաբերյալ: Նա անդրադարձավ համակրթական, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում կատարված աշխատանքներին, ձեռք բերված հաջողություններին, առկա խնդիրներին և իր շնորհակալությունը հայտնեց ուսուցիչներին, որ պատվով են հաղթահարել պատերազմի, ետպատերազմյան իրավիճակի, համավարակի մարտահրավերները և ապահովել կրթական գործի անընդհատությունը:

Իրենց ուսումնական հաստատություններում առկա խնդիրները ներկայացրին Շուշիի և Հաղորութի շրջանների ԿՍ բաժնիների վարիչներ Իրա Սարգսյանը և Արթուր Մինասյանը:

ԱՀ ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանն անդրադարձավ սովորողների արտաքին ընթացիկ գնահատման, Գ-րդ դասարանի ավարտական և կենտրոնացված քննությունների, ներառական կրթության և բուհերի ընդունելության քննությունների արդյունքներին:

Առաջիկա տոների՝ Գրի և դպրության օրվա, Արցախի Հանրապետության հռչակման 31-րդ տարեդարձի առթիվ ներկաներին շնորհավորեց ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը: «Թող նոր ուսումնական լինի նոր ժամանակաշրջան՝ որպես ազգային ոգու վերածննդի, նոր նվաճումների, գիտության զաղտնիքների բացահայտման, երիտասարդ սերնդի առողջ կենսադիրքի ձևավորման, ռազմա-հայրենասիրական դաստիարակության խնդիրների իրականացման տարի», - ասաց նա: Նախարարը նշեց, որ արցախային կրթությունը հայտնվել է նորագույն պատմության ճակատագրական փուլերից մեկում. անմախառն սպառնալիքներ են ստեղծված մեր անվտանգության համար: Հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված՝ փոխվել են ոչ միայն քաղաքական, տնտեսական և սոցիալական իրողությունները, այլև հրատապ է դարձել նորովի նայելու և վերագնահատելու կրթության կարիքները, նպատակներն ու տեսլականը: «Բոլորս գի-

տենք, որ կրթությունը լոկ գիտելիքների քանակ չէ, այլ լիակատար ըմբռնում ու հնուտ կիրառումն է այն ամենի, ինչ գիտենք»:

Խորհրդակցությունն ամփոփեց ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը: «Առիթն օգտագործելով՝ բոլորիդ շնորհակալություն եմ հայտնում ձեր կատարած աշխատանքի համար: Իրականում բարձր և ծանր առաքելություն եք կատարում: Բոլորս գիտակցում ենք, թե ինչ ծանր բեռ կա դրված ուսուցիչների վրա: Միևնույն ժա-

ինչ կարիքներ ունենք, որոնք պետք է վեր հանենք՝ լուծման համար պատշաճ աշխատանքներ կատարելով»: Ըստ նրա՝ նոր ուսումնական տարին պետք է լինի խոր վերլուծության ժամանակահատված՝ համատեղ վեր հանելու խնդիրները, դնելու հիմնարար բարեփոխումների հիմքը:

Ա. Բեգլարյանի խոսքով՝ մեր հետընթացի պատճառները միայն կրթական համակարգում չեն, նաև պետական տարբեր ծրագրերի, քաղաքականության մեջ են,



տարածաշրջանային գործոններով են պայմանավորված: «Բայց կարծում եմ, որ այդ գործոնների ճնշող մեծամասնությունը մեզնից է կախված, և մենք լրացուցիչ ջանք պետք է գործադրենք, որ կարողանանք հաղթահարել արտաքին գործոնների հարուցած դժվարությունները: Այո, Արցախում ապրելը, կրթելը, ուսանելը հեշտ չէ, շատ ավելի դժվար է, քան աշխարհի բազմաթիվ երկրներում: Բայց մյուս կողմից, Արցախում ապրելը և արարելը շար ավելի պատվաբեր է, և մեզնից շատ ավելի ջանք ու եռանդ է պահանջվում, որպեսզի կարողանանք հասնել մեր երազած հայրենիքին, որ բոլորս պահում ենք մեր մտքերում ու սրտում», եզրափակեց պետնախարարը:

Երեք ժամ տևած խորհրդակցության կեսն անցավ հարց ու պատասխանի ձևով: Խորհրդակցությունից հետո ուսուցիչները մասնակցեցին հ. 1 դպրոցում կազմակերպված առարկայական սեմինարին:

Օգոստոսյան խորհրդակցությունները շարունակվում են Ասկերանում, Մարտունում ու Մարտակերտում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ



Օգոստոսի 16-21-ը Աղվերանում անցկացվեց Համահայկական կրթական 10-րդ խորհրդաժողովը, որը միավորել էր Սփյուռքի հայկական կրթօջախների ներկայացուցիչներին՝ բարձրաձայնելու կրթական ոլորտում հայապահպանության արդի խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները:

ՀՀ ԿԳՄՍ-ն Համահայկական կրթական խորհրդաժողովներ կազմակերպում է երկու տարվա պարբերականությամբ:

Խորհրդաժողովին մասնակցում էին 21 երկրի կրթական ոլորտի շուրջ 90 ներկայացուցիչներ:

Երկամյա պարբերականությամբ Հայաստանում անցկացվող խորհրդաժողովների նպատակն է քննարկել արտերկրում հայկական կրթօջախների առկա հիմնահարցերը, հստակեցնել կրթության ոլորտում ՀՀ ԿԳՄՍ կողմից իրականացվող ծրագրերը և համագործակցության հաջողական քայլերը:

Խորհրդաժողովի մասնակիցներին ուղերձ է հղել ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դուբանյանը, որում մասնավորապես ասված էր. «Շնորհավորում եմ բոլորին խորհրդաժողովի մեկնարկի կապակցությամբ: Խորհրդաժողովում մեզ համախմբում է մեկ մտայնություն՝ հայեցի կրթության և դաստիարակության առկա հիմնախնդիրները Սփյուռքում: Այն հնարավորություն է ընձեռում համախմբվելու և համատեղ քննարկելու այն ուղին, որով պետք է քայլի հայը, հստակեցնելու կրթության ոլորտում պետական քաղաքականությամբ ամ-

րագրված համագործակցության զարգացման հեռանկարները, գնահատելու արդեն առկա և իրականացվող ծրագրերի արդյունավետությունը: Այս օրերի արդյունքում մշակված բանաձևը պետք է արտացոլի այն հիմնախնդիրները, որոնց լուծումը կարևոր է Հայաստանի և Սփյուռքի կրթական դաշտի համար: Մաղթում եմ ձեզ բարի երթ և բեղմնավոր օրեր»:

Խորհրդաժողովին մասնակցել են Արցախի Հանրապետության ԿԳՄՍՍ պատվիրակությունը՝ նախարար Անահիտ Հակոբյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նախարարի տեղակալ Միքայել Համբարձումյանը, կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայեյանը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը և շնորհավորել է խորհրդաժողովի մասնակիցներին և ներկայացրել Արցախի Հանրապետության կրթական ներկայիս իրավիճակը, հետպատերազմյան խնդիրները, առկա մարտահրավերները նախադպրոցական կրթությունից մինչև բուհեր և գիտություն: Հարց ու պատասխան ձևաչափով տեղի է ունեցել քննարկում, հնչել են համագործակցության առաջարկներ Արցախի ուսուցիչներին վերա-

պատրաստելու, սեմինարներ կազմակերպելու և կրթական ոլորտի բարելավման այլ ուղղություններով: Անահիտ Հակոբյանն ի պատասխան առաջարկների՝ ասել է, որ պատրաստական է դրանք մանրամասն քննարկել և ծառայեցնել ի նպաստ Արցախի կրթական համակարգի բարելավման:

Խորհրդաժողովում որպես աշխատանքի հիմնական ձև՝ սահմանված էին լիազուրկ միստեր և բաց քննարկումներ: Համախմբվելով ընդհանուր օրակարգի շուրջ՝ խորհրդաժողովի մասնակիցները ծանոթացան ՀՀ-ում, ԱՀ-ում և Սփյուռքի տարբեր տարածաշրջանների կրթության ոլորտում առկա իրավիճակին, ուրվագծեցին համագործակցության եզրերը և հստակեցրին հետագա խնդիրներն ու անելիքները: Տարբեր երկրների պատվիրակներն աշխատեցին միևնույն թեմատիկ մասնախմբերում՝ փոխանակելով իրենց փորձը, ներկայացնելով ծրագրերը, ծանոթանալով Հայաստանում մշակված և իրագործվող ուսումնական ծրագրերին ու մանկավարժական ձեռքբերումներին:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՍԿՍՎԱԾ Ե ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈ



Օգոստոս ամիսը ուսուցիչների վերապատրաստման եռօրյա շրջանն է: Նախ՝ «Երկարօրյա դպրոց» ծրագրի ուսուցիչները վերապատրաստվեցին: ԱՅ ԿԳՄՍ փոխնախարար Իվան Պողոսյանի նախաձեռնությամբ ՆՁՊ առարկայի ուսուցիչների վերապատրաստումներ են կազմակերպվել Մարտակերտում, Մարտունու, Ասկերանում: Գործընթացը շարունակական է: «Շախմատ» առարկայի ուսուցիչներն են մասնակցել իրենց ամենամյա վերապատրաստումներին:

տաղիր ատեստավորում է անցնում, Հայաստանում և Արցախում ընդհատվել էր: Օգոստոսի 18-ից Արցախում և ՀՀ-ում վերսկսվել են նախատեսագիտական վերապատրաստումները: Դրանք իրականացնում են ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորված կազմակերպությունները: ԱՅ ԿԳՄՍ-ն այդ գործը վստահել է մեր թիմին:

- Ի՞նչ է ներառում վերապատրաստումների ծրագիրը:

- Ծրագրի իրականացմանը հատկացվում է 110 ժամ 8 բաժինների՝ հետևյալ համամասնությամբ. «Հանրակրթության օրենսդրություն»՝ 10 ժամ (1 կրեդիտ), «ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում»՝ 20 ժամ (1 կրեդիտ), «Տարիքային հոգեբանություն»՝ 10 ժամ, «Դիրքորոշում և արժեք»՝ 10 ժամ, «Դեմոկրատիզմ»՝ 10 ժամ, «Գնահատում»՝ 15 ժամ (1 կրեդիտ), «Առարկայի դասավանդման մեթոդիկա»՝ 30 ժամ՝ 2 կրեդիտ, «Հետազոտական աշխատանք կատարելու սկզբունքներ» (անցկացվում է վերապատրաստման ամբողջ ընթացքում 5 ժամ 3 կրեդիտ):

Ուսուցիչը համարվում է դասընթացն ավարտած, եթե մասնակցել է յուրաքանչյուր բաժնին հատկացված ժամաքանակի առնվազն 2/3-ին և յուրաքանչյուր բաժնի ամփոփիչ աշխատանքից ապահովվել է առնվազն 60 տոկոս արդյունք, ներկայացրել է պահանջվող չափանիշներին համապատասխան հետազոտական աշխատանք: Հավաստագիր տրվում է 9-11 կրեդիտներ հավաքած ուսուցիչներին:

Օգոստոսի 23-ին ավարտվում են առարկայական վերապատրաստումները, որից հետո ուսուցիչները կշարունակեն առկա դասընթացները մինչև օգոստոսի 26-ը «Տարիքային հոգեբանություն», «Համընդհանուր ներառում», «Դիրքորոշում և արժեք», «Օրենսդրություն» բաժիններով: Վերապատրաստումների երրորդ մասը կանցկացվի առցանց՝ ՏՀՏ և վերը նշված մնացած բաժիններով: Նախատեսվել են մինչև օգոստոսի 30-ը, բայց հաշվի առնելով ինտերնետ-կապի վիճակը, հնարավոր է՝ դրանց

հատկացված օրերը երկարաձգվեն: **- Ինչպե՞ս եք Դուք ընտրում վերապատրաստող ուսուցիչներին՝ դասընթացավարներին:**

- Ինքս լինելով տարբեր կազմակերպություններում որպես պարտադիր ատեստավորման մասնագետ, հայտ ներկայացրի և տեղեկատվություն տարածեցի այն մարդկանց շրջանում, ովքեր ունեն վերապատրաստողի հավաստագիր և ծանոթ են նոր մոդուլներին, ծրագրերին, չափորոշիչներին ու նրանց հրավիրեցի Արցախ: Բնականաբար, ցանկացողներն ավելի շատ էին, բայց չկարողացան զայ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, քանի որ ինչպես պատանի, նաև այս պահին ՀՀ-ում են ընթանում ուսուցիչների պարտադիր վերապատրաստումներ, և շատ մասնագետներ ներգրավված են կամ որպես վերապատրաստողներ, կամ՝ վերապատրաստվողներ, դրա համար էլ կարողացանք կազմակերպել այս փուլում 5 առարկայի գծով:

- Արցախում էլ կան լավ ուսուցիչներ, որոնք կարող են վերապատրաստումներ անել: Չե՞ք կարծում, որ նրանց էլ պետք է ընդգրկեք:

- Մեր նպատակն էլ հենց դա է, և այս պահին յուրաքանչյուր դասընթացավար ունի նաև հանձնառություն՝ խմբերում պրպտել, զննել, գտնել լավագույն մասնագետների, որպեսզի հետագայում նրանց ներուժն էլ օգտագործվի այդ գործընթացում:

Այնպես չէ, որ ես Արցախի մասնագետին ավելի ցածր եմ դասում, քան Հայաստանից եկածին: Քավ լիցի: Պարզապես մասնագետը չի կարող անընդհատ ատեստավորում իրականացնել, եթե ինքը նոր մոդուլներով դեռ ատեստավորված չէ: Արցախի ներուժն անպայման կօգտագործենք, քանի որ ամեն խմբից ընտրվելու են 2-3 լավ մանկավարժներ, ովքեր այս պահին անցնում են ատեստավորում և ստանալու են հավաստագիր: Մեր նպատակն այն է, որ որոշ ժամանակ հետո ՀՀ-ից մասնագետ իրավիճակում կարիք չլինի, Արցախում ունենանք վերապատրաստված և ատեստավորված մասնագետների բազա: Հաջորդ 5 տարում,

- Հուլիսին Դուք կկազմակերպեք:

- Ես Արցախում եմ աշխատում, մեր կազմակերպությունը գրանց-

ված է Արցախում: Ի պաշտոնե ես նաև Արցախի սոցիալական գաղափարախոսության հիմնարկի տնօրենն եմ: «Եպիկենտրոն» ՀՀ-ի նախագահը Արշակ Հայրապետյանն է, որը պատերազմային կարգավիճակում Արցախում կազմակերպվող ուսուցիչների մասնագետներին կվերապատրաստեն ուսուցիչներին:

- Այնպես չէ, որ ես Արցախի մասնագետին ավելի ցածր եմ դասում, քան Հայաստանից եկածին:

Այնպես չէ, որ ես Արցախի մասնագետին ավելի ցածր եմ դասում, քան Հայաստանից եկածին: Քավ լիցի: Պարզապես մասնագետը չի կարող անընդհատ ատեստավորում իրականացնել, եթե ինքը նոր մոդուլներով դեռ ատեստավորված չէ: Արցախի ներուժն անպայման կօգտագործենք, քանի որ ամեն խմբից ընտրվելու են 2-3 լավ մանկավարժներ, ովքեր այս պահին անցնում են ատեստավորում և ստանալու են հավաստագիր: Մեր նպատակն այն է, որ որոշ ժամանակ հետո ՀՀ-ից մասնագետ իրավիճակում կարիք չլինի, Արցախում ունենանք վերապատրաստված և ատեստավորված մասնագետների բազա: Հաջորդ 5 տարում,

կարծում եմ, 99 տոկոսով Արցախի մասնագետները կվերապատրաստեն ուսուցիչներին: Անշուշտ, մեր կազմակերպությունը կշարունակի առարկայական ուսուցիչների կապը ՀՀ և Արցախի ուսուցիչների միջև, որ նրանք անընդհատ փորձի փոխանակվում անեն: Մեր խնդիրը հիմա այն է, որ ուսուցիչը սովորի շատ մեթոդներ, սովորի հատուկ ճիշտ, սովորի ուշադրություն դարձնել դասի նպատակին հասնելուն, այսինքն՝ բոլոր կարևոր բաղադրիչները, որոնք միշտ դուրս են մնում: Այնպես չէ, որ իրենք այդ

ամեն ինչը չգիտեն, բայց ժամանակ առ ժամանակ նոր մտեցումներ են պետք: Այսօր անվտանգային այնպիսի վիճակում ենք, որ չպետք է թուլանանք, որ այսինչ ինչ բանը չենք կարող կան չունենք: Եթե չունենք, ապա պիտի ստեղծենք: Պատերազմող երկիրը չի կարող չունենալ գործնական հոգեբանների բանակ: Ցավոք, մենք չունենինք:

- Դուք ինչպե՞ս եք վերաբերվում ուսուցիչների աշխատավարձի բարձրացման համար կամավոր ատեստավորմանը, այդ ճանապարհն են ընտրել ՀՀ-ում:

- ՀՀ-ում կամավոր ատեստավորման փորձը ցույց տվեց, որ շատ անհաջող էր: Ըստ իս, դա արված էր նրա համար, որ ուսուցիչները չփորձեն բարձրաձայնել աշխատավարձի բարձրացման մասին: Երկրորդ խնդիրը, որ դրված էր, կրկնուսույցների ինստիտուտը իբր վերացնելու էր: Բայց կամավոր ատեստավորման այդ մեթոդով փաստացի խրախուսվում են հենց կրկնուսույցները: Հաշվի էր չէր առնված նաև այն հանգամանքը, որ միջին դպրոցի և ավագ դպրոցի ուսուցիչները նույն ատեստավորման են անցնում: Արդյունքում վարկաբեկվեց ուսուցիչը: Հիմա երկրորդ փուլն է անցկացվում, և շատերը, տեսնելով, առաջին փուլի արդյունքները, չեն դիմում կամավոր ատեստավորման, և կազմակերպիչները ընկել են դժմեղու՝ համոզելու ուսուցիչներին: Եթե Արցախում ուզում է իր ուսուցիչի արժևորի և աշխատավարձ բարձրացնել, պետք է ի սկզբանե բարձրացնի: Այն մարդիկ, ովքեր հիմա Արցախում են, արդեն իսկ զննատեսանք արժանի են: Իսկ եթե կամավոր ատեստավորման ցանկություն ունեն, պետք է այնպես կազմակերպեն, որ գոնե նրանց արժանապատվությունը չվիրավորեն: Ինչ վերաբերում է տարակարգմանը, կարծում եմ, շատ տեղին է, որ փոփոխություններ են կատարվել:

- Իսկ ի՞նչ կասե՞ք սպասվող չափորոշիչների մասին, որ 2023-ին պետք է ընդունվեն, ուսուցիչները երկար բանավիճեցին այս հարցի շուրջ:

- Այդ չափորոշիչների մասին ես իմ կարծիքն ասել եմ. շատ լուրջ խնդիրներ կային, իհարկե, այդ ընդհանուր առմամբ ես էլ եմ շատ պահանջներ ներկայացրել, և այդ ժամանակ շատ բաներ փոխվեցին: Այս պահին այդ փոփոխված տարբերակներով են տեղի ունենում փորձարկումները Տավուշի մարզում: Գումարած՝ փորձարարական ամբողջ վիճակը. երբ տեսնում են չի հաջողվում, նորից փոփոխություններ են անում: Բայց հիմա արդեն կան նոր դասագրքեր, հավելյալ նյութեր և այլն: Իհարկե, էլի իրենց ամհիպուլ-յացիաներն արել են և որոշ չափով «աղբ» են լցրել ծրագրերի մեջ, բայց հույս ունեմ, որ այդպես չի մնա:

Սվեդլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԾԻՔՆԵՐ, ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաթեմատիկայի խմբի մասնակիցներ Անժելիկա ԷԼԻՔԵԿՅԱՆ, Հովսեփավանի հիմնական դպրոց:

- Ծիշուն ասած, արդեն 3-րդ-4-րդ անգամ եմ մասնակցում վերապատրաստումների, կարևոր նորություն չկա, բայց ինձ համար միևնույն է, հաճելի է մասնակցելն ու շփվելը միմյանց հետ: Իրար օգնելու շատ բան ունենք, նոր սերունդը կարիք ունի ավագների հետ աշխատելու և ընդունում է դա:

Ուրախակի է, երբ տեսնում ենք, թե վերջին ժամանակներս ինչ ուշադրություն է դարձվում բնագիտական առարկաներին: Մենք էլ շատ ջանք կգործադրենք, որ սովորեցնենք երեխաներին: Գոհ ենք Մարգարիտ Բազդայանի վարած դասերից, որն այս լարված վիճակում եկել է Արցախ՝ մեզ օգնելու: Նոր ուսումնականը կկ-



սենք նոր ուժով: Շնորհավոր: **Նինա ՂԱԴՐԱՍՄԱՆՅԱՆ**, Ստեփանակերտի մաթեմատիկայի բաղադրյալ մեթոդիկավորման նախագահ:

- Չնայած մի քանի անգամ մասնակցել եմ վերապատրաստման դասընթացների, միևնույն է, կարծում եմ՝ թարմացումն անհրաժեշտ է: Խմբում կան տղամարդ ուսուցիչներ Ստեփանակերտից և շրջաններից, ինչն ուրախակի է: Մոսից մայր ու տղա ուսուցիչներ ունենք, ինչը դրվատելի երևույթ է: Ուրեմն, այս գյուղում մաթեմատիկոսների կենսու-

նակ գեներ շարունակվում է: Տեսանք, որ վերապատրաստողը մեզ ման ուսուցիչ է, բայց մի շարք մրցույթների մասնակցած և տարակարգեր ստացած: Ուրեմն, մենք էլ պետք է ձգտենք մնան առաջընթացի: Ինքներս էլ կարող ենք համացանցից հավելյալ նյութեր քաղել, բայց նա հեշտացրել է մեր գործը՝ իր նյութերը տրամադրելով մեզ:

Արմինե ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Շուշիի Դ. Ղազարյանի անվան դպրոց:

- Մենք համոզվեցինք, որ ունենք մանկավարժներ, որոնք հետ ուզում ենք շփվել, որովհետև զգում ենք, որ նրանցից բարի պտուղներ ենք քաղելու: Շատ կարևոր է, երբ դիմացինիդ հետ շփումը քեզ տալիս է դրական էնդոգամեր թե՛ գիտելիքի, թե՛ մարդկային առումով:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՐԱՆԵԼ ԵՎ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԱՐՑԱԽԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ



Օգոստոսի 24-ին աշխատանքային այցով Արցախի գիտական կենտրոնում էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվիրակությունը՝ նախագահ Աշոտ Սադյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին ԳԱԱ ինստիտուտների տնօրեններ, ակադեմիայի առաջատար գիտաշխատողներ:

Արցախի գիտական կենտրոնի (ԱԳԿ) գիտաշխատողների հետ հանդիպմանը տնօրեն Անյուտա Սարգսյանը ներկայացրեց համագործակցության շրջանակներում մինչ այսօր իրականացված, ինչպես նաև նախատեսվող ծրագրերը, ակադեմիայի ինստիտուտներից ստացած աջակցությունը: Նշեց, որ մոտ 12 տարի է՝ Արցախի գիտական կառույցը համագործակցում է «Հայ կենսատեխնոլոգիա գիտաարտարական կենտրոն»-ի և Էկոլոգա-նոսֆերային հետազոտությունների կենտրոնի հետ, որոնց

աջակցությամբ ԱԳԿ-ն ձեռք է բերել կահավորված լաբորատորիաներ, վերապատրաստվել է գիտական ներուժը: Ընթացիկ տարվա հունվարին բացվեց «Նարինե+» կաթնամթերքի արտադրամասը, սկսվեց գիտության առևտրայնացման գործընթացը: Նյութական աջակցությունից բացի այս մեկ տարվա ընթացքում ԱԳԿ-ի երիտասարդ գիտաշխատողները մասնակցել են ինստիտուտի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովներին, վերապատրաստում են ստացել համապատասխան գիտական լաբորատորիաներում, մասնակցել են ամառային դպրոցին (հարգելի պատճառներով այս տարի չի ստացվել): Արևելագիտության ինստիտուտի կողմից մասնագիտական գրականությանը համալրվել է ԱԳԿ գրադարանը: Ռադիոֆիզիկայի ինստիտուտում աջակցել է լաբորատորիաների համար ժամանակա-

կից սարքավորումներ ձեռք բերելու հարցում, իսկ Բյուրականի աստղադիտարանի ղեկավարությունը Արցախի դպրոցներում հանդես է եկել աստղաֆիզիկայի վերաբերյալ դասախոսություններով: Վերջինս նաև երկու գիտաճանաչողական ճամբար է կազմակերպել արցախցի դպրոցականների, իսկ մեկ ամառային դպրոց՝ ուսանողների համար: Ֆիզիոլոգիայի ինստիտուտի կողմից ստացված սարքավորումներին այսօր էլ զոււմարվեցին նորերը: Երկրաբանության ինստիտուտը հատուկ ծրագրերով համակարգիչ է նվիրել ԱԳԿ-ին:

Տնօրենի խոսքով՝ կատարվածը շատ է, ամեն ինչ էլ, որ հնարավոր է ներկայացնել. «Այս ամենը ոգևորիչ է, և մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում ԳԱԱ նախագահին ու ինստիտուտների տնօրեններին՝ իրենց պատրաստակամության համար: Նրանք իրենց նպաստ են բերում Արցախի գիտական կենտրոնի հետազոտական մտքի զարգացմանը տարբեր ոլորտներում: Հուսով եմ՝ հետագայում ևս կշարունակենք Արցախի տնտեսության զարգացմանն ուղղված մեր ծրագրերը»:

«Մենք եկել ենք հատկապես այս օրերին՝ ցույց տալու, որ մենք ձեզ հետ ենք,- ասաց Աշոտ Սադյանը: Միզուցե որոշ մարդիկ այլ կերպ են մտածում, բայց Հայաստանի մտավորականությունը, գիտական աշխարհը ձգտում են հենց նման պահերին ավելի շատ լինել ձեր կողքին: Պատերազմից հետո մենք սկսել ենք ավելի շատ այցելել Արցախ,

քան առաջ: Իսկ հիմա՝ առավել ևս: Քանի որ ճակատագրական պահ է, որոշեցինք գալ, հանդիպում ունենալ երկրի նախագահի հետ, ցույց տալ, որ մենք տրամադրված ենք ինչով կարող ենք մեր հայրենիքի համար անել: Մենք էլ պետք է մեր ոլորտում անենք: Ասել եմ ու կրկնում եմ, որ մեր գլխավոր նպատակն այն է, որ գիտության այն բոլոր ճյուղերը, որոնք պետք են Արցախին և որոնք կան մեր ակադեմիական ինստիտուտներում, պետք է զարգացնենք այստեղ: Հարկ է հետևություններ անել սխալներից և փորձել առաջ գնալ»: Ա. Սադյանն այնուհետև ասաց, որ ակադեմիայի յուրաքանչյուր ինստիտուտ պետք է Արցախի գիտական կենտրոնում ստեղծի մի փոքր օջախ, որը հետագայում կդառնա լաբորատորիա, իսկ ավելի ուշ՝ ինստիտուտ»: Ընդգծեց, որ պետք է փոխվի գիտության հանդեպ ռազմավարությունը. «Եթե մի տասնհինգ տարի առաջ կարգեր էինք պատրաստում և ուղարկում այստեղ, հիմա կարգերը պետք է իրենք կարգեր պատրաստեն մեր օգնությամբ: Դրա համար խնդիրն այստեղ լաբորատորիաների ստեղծումն է: Մեզ նման երկիրը, որը բնական հարստություններ չունի, պետք է գիտությամբ, գիտատեխնոլոգիական առաջընթացով առաջ գնա: Մեր ամենամեծ սխալն այն էր, որ 90-ականների պատերազմից հետո Արցախում, որ պետք է գիտության զարկ տայինք, բայց չարեցինք: Վերջին պատերազմը տեսանք, գիտության պատերազմ էր: Ինչո՞ւ պետք է մեր հայ երիտա-

սարդները ուրիշ երկրներում ԱԹՍ-ների արտադրության ամենաորոշիչ տեղերում լինեն, իսկ Հայաստանում՝ ոչ: Դրա համար մեր ակադեմիայի ռազմավարական կետերից մեկը դա է՝ խթանել և զարգացնել Արցախի գիտությունը և հիմնականում զարգացնել այն ուղղությունները, որոնք պետք են Արցախի և՛ տնտեսությանը, և՛ ռազմարդյունաբերությանը, և՛ մտավոր ներուժին»:

Ելույթներով հանդես եկան և կատարված աշխատանքների ու պայծառ ծրագրերի մասին խոսեցին նաև ԳԱԱ ինստիտուտների տնօրենները:

Հանդիպմանը ներկա էր ԱՀ նախագահի խորհրդական Լուսինե Ղարախանյանը: «Ձեր այցերը ռեստորային են: Ամեն անգամ դրանցից լիցքավորված՝ սկսում ենք մեր ծրագրերի մասին մտածել: Հավատացնում եմ, որ ես իմ գործառնություններն օգտագործելու եմ և ամեն ինչ անելու եմ, որ Արցախի գիտական կենտրոնում առաջ տանի իր գաղափարները, լինի կենսունակ: Հավատում եմ, որ այս կառույցը դեռ կասի իր խոսքը», - ասաց նա:

Նշեց, որ ԱՀ նախագահ Արախիլ Հարությունյանն ընդունել է ՀՀ ԳԱԱ պատվիրակությանը: Քննարկվել են Արցախում կրթության ու գիտության զարգացմանն առնչվող հարցեր: Հանդիպմանը մասնակցում էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, պաշտոնատար այլ անձինք:

Սեփ. լրատվություն

ՀԱՍՏԱՆՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

1 Մասնախմբերում այս տարվա առաջնության թեմաներն էին Սփյուռքի ամենօրյա և մեկօրյա դպրոցներում արևելահայերենի և արևմտահայերենի դասավանդման հիմնախնդիրները, կրթական կառույցների երկկողմանի համագործակցության հեռանկարները, նախապայմանները և մեծահասակների կրթության կազմակերպման առանձնահատկությունները, խնդիրները և այլն:

Քննարկվող առաջնության խնդիրներ

Խորհրդաժողովն անցկացվեց լիազորմամբ նիստերի և առանձին մասնախմբերում աշխատանքային քննարկումների ձևաչափով: Լիազորմամբ նիստերում ուսուցիչները ներկայացրել են իրենց համայնքներում կրթության կազմակերպման առանձնահատկություններն արդի Սփյուռքում: Թեման քննարկվել է նաև մասնախմբերում: Դրիմի Եվպատորիա քաղաքի հայկական մեկօրյա դպրոցի ուսուցչուհի Կարինե Ասլանյանը ներկայացրել է, որ պետական աջակցությամբ միջնակարգ դպրոցում ստեղծել են «Մայրենի լեզու» նախագիծը, կազմել են ծրագիրը, որը հաստատվել է պետության կողմից: Ուսուցիչները սկզբնական շրջանում աշխատել են անվարձաբաժնի:

«Հետագայում մենք կարողացանք հասնել այն արդյունքին, որ որոշակի պայմաններում վարձատրվեցինք: Շատ արագ ինքնակազմակերպվելով՝ համագործակցեցինք ծնողների հետ և ստացանք դիմումներ: Յոթ երեխայի դիմում ստանալու դեպքում տրամադրվում էր 2 դասաժամ՝ վարձատրությամբ. այսօր ունենք 16 երեխա՝ 4 դասաժամով», - իրենց

փորձն է ներկայացրել Դրիմի հայ համայնքի ներկայացուցիչը:

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում հայ մանուկների համար վերջերս բացվել է ամենօրյա մանկապարտեզ. մինչ այդ գործել է մեկօրյա դպրոց: Ինչպես ներկայացրեց այժմ մանկապարտեզում, իսկ մինչ այդ դպրոցում աշխատող Գայանե Մելքոնյանը, ինքը մասնագիտությամբ ֆինանսիստ է, սակայն ոգեշնչված Ռուսաստանում Հայաստանի դեսպանատանը կից գործող «Վերածնունդ» մեկօրյա դպրոցի գործունեությամբ՝ որոշել է փորձի փոխանակմամբ հայագիտական առարկաներ դասավանդել Պրահայի հայկական դպրոցում:

«Դպրոց հաճախում էր շուրջ 50 աշակերտ՝ հիմնականում կրտսեր տարիքի: Դպրոցի նկատմամբ հետաքրքրությունն այդքան մեծ չէր: Պետք էր շատ համոզիչ լինել գրավելու համար: Սակայն մորաբաց ամենօրյա մանկապարտեզը կարծես ավելի մեծ հեռանկարներ ունի,- իր գնահատական է ներկայացրել Գայանե Մելքոնյանը և ավելացրել,- եվրոպական միջավայրում մեծացող հայ երեխայի համար հայագիտական առարկաների դասավանդման մեթոդները պետք է վերանայվեն»:

Նա շատ է կարևորել հատկապես հայոց պատմության հաղթանակների ու փառահեղ էջերի ճիշտ մատուցումը, ինչն առավել հետաքրքրական կդարձնի հայկական կրթությանը Սփյուռքում ապրող հայ մանկան համար: Ուսուցչուհին որպես կարևոր խնդիր ընդգծել է նաև ծնողների մոտեցումն ու վերաբերմունքը՝ միաված հայա-

պահպանությանը:

Փորձի փոխանակման համատեքստում տարբեր համայնքներ ներկայացնող կրթական ոլորտի ներկայացուցիչներն արձանագրել են՝ որպես հայկական դպրոցի գործունեության շարունակականությունն ապահովելու կարևոր քայլ, առաջնային է ուսումնասիրել տվյալ երկրի օրենսդրական դաշտը, որը շատ հաճախ առավել դյուրին ճանապարհով թույլ է տալիս կարգավորել հայապահպանության հիմնախնդիրները՝ ի նպաստ համայնքի:

Խորհրդաժողովի մասնակիցները տեղում նախանշել են հետագա համագործակցության առաջնության տարբերակները:

Մասնախմբերում քննարկվել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցության ուղիները և հիմնախնդիրները: Փոխգործակցության փրախում հիմնականում անհրաժեշտ գրականության տրամադրումն էր:

Եզիպոսի մայրաքաղաք Կահիրեում գտնվող Գալուստյան-Նուբարյան ազգային վարժարանի տնօրեն Գևորգ Գազանձյանի գնահատմամբ՝ հայապահպանության խնդիրը համայնքում օրհասական է դառնում: Նրա տեղեկացմամբ՝ վարժարանն ունի գրքերի խնդիր. դրանք փոխառվում են ուսուցիչների կողմից հավաքագրված տեքստերով՝ ըստ թեմաների: Որպես աջակցություն և համագործակցություն ԿԳՄՍ նախարարության կողմից՝ առաջարկվել է արդեն իսկ հավաքագրված տեքստերն ուղարկել Հայաստան՝ փորձագիտական կարծիքի, ինչից հետո

դրանք անհրաժեշտության դեպքում կհրատարակվեն որպես ձեռնարկ և կուղարկվեն Կահիրեի հայ համայնք: Ըստ Գազանձյանի՝ վարժարանում ուսանող աշակերտը պետք է հայերենից քննություն հանձնի հաջորդ դասարան փոխադրվելու համար, սակայն աշակերտն ինքնին հայոց լեզվի կարևորությունը համայնքում այլևս քիչ է զգում: Քննարկվել են Հայաստանից հայերեն դասավանդող ուսուցչի գործուղման հեռանկարներն ու հնարավորությունները ներկա պայմաններում:

Առաջարկվել է համագործակցաբար օգտվել Լիբանանի հայ համայնքի դասագրքերից, ինչին ի պատասխան՝ Լիբանանի հայ համայնքը ներկայացնող Տիգրան Ծինպաշյանը աջակցության պատրաստակամություն է հայտնել: Վերջինս ընդգծել է դասագրքերի վերանայման խնդիրը, ինչպես նաև բարձրաձայնել է Լիբանանում հայ ուսուցիչների համալրման և մասնավորապես հայոց պատմություն դասավանդող մեթոդիստ ունենալու կարևորության մասին:

Խորհրդաժողովում, որպես կարևոր հիմնախնդիրներ, զեկուցումներ են հնչել նաև լեզվական քաղաքականության (Դավիթ Գյուրջինյան, Լեզվի կոմիտե), արևմտահայերենի պահպանության, ճիշտ տառադարձման անհրաժեշտության (Սուսաննա Տիոյան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժին) և այլ խնդիրների վերաբերյալ:

Աղբյուրը՝ escs.am

ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Ս Ա Ն

«12» օգոստոսի 2022թ.

N 470 -Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:
2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչությանը՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով սույն հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:
3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը և կրթության պետական տեսչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ՅԱԿՈՒԲՅԱՆ

Հավելված

Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի «12» օգոստոսի N 470 -Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան) բացառությամբ սույն հավելվածի 7-րդ և 8-րդ աղյուսակների, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլան(ներ):

2. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը)՝ ըստ դասարանների:

3. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար:

2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում:

3) Նախարարության կողմից տվյալ Հաստատության համար երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցումն իրականացնելու դեպքում:

4. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1) «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ»-ում,

2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:

5. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2022 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2023 թվականի մայիսի 26-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 27-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ 1-ին, 32՝ 2-րդ և 34՝ 3-12-րդ դասարանների համար: Բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական շաբաթվա տևողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ 15-օրյա ժամկետում համաձայնեցնելով Նախարարության հետ:

6. Ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է Ուսումնական պլանի հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար, ըստ անհրաժեշտության կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՌԴ):

7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացառությամբ ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն՝ միջին, ծանր և խորը խանգարումներ ունեցող երեխաների, ինչպես նաև տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների, անհատական ուսուցումն իրականացվում է «Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան»-ով՝ համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 7-ի:

8. Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող, ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն՝ միջին, ծանր և խորը խանգարումներ ունեցող երեխաների ուսուցումն իրականացվում է «Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող միջին և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան»-ով՝ համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 8-ի:

9. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշիչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

10. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային սանդղակ:

11. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:

12. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն հավելվածի 14-րդ կետով նախատեսված դեպքի:

13. Սովորողների ընթացիկ գնահատումն իրականացվում է բանավոր հարցման, գործնական աշխատանքի, թեմատիկ աշխատանքի և կիսամյակային ամփոփիչ աշխատանքի ձևերով: Թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ աշխատանքներն իրականացվում են գրավոր եղանակով: Բանավոր հարցումների, գործնական աշխատանքների, թեմատիկ աշխատանքների իրականացվում է կիսամյակի ընթացքում սահմանում է Հաստատությունը՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ, առաջնորդվելով Նախարարության կողմից հաստատված առարկայի ծրագրով, գնահատման մեթոդաբանությամբ և մեթոդական ցուցումներով: Կիսամյակային ամփոփիչ աշխատանքն իրականացվում է կիսամյակի ընթացքում մեկ անգամ՝ կիսամյակի վերջում:

14. 1-ին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիր:

15. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 45 րոպե է:

16. Տարրական դասարաններում (1-4-րդ) յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

17. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2022 թվականի հոկտեմբերի 24-

30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ից 2023 թվականի հունվարի 8-ը ներառյալ, գարնանային՝ 2023 թվականի մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

18. 1-ին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2022 թվականի հոկտեմբերի 17-30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ից 2023 թվականի հունվարի 22-ը ներառյալ, գարնանայինը՝ 2023 թվականի մարտի 20-ից ապրիլի 2-ը ներառյալ:

19. 2-րդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2022 թվականի հոկտեմբերի 24-30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ից 2023 թվականի հունվարի 22-ը ներառյալ և գարնանայինը՝ 2023 թվականի մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

20. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման լիազորված մարմինի՝ շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հավելվածի 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնության դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ: Լիազոր մարմինը փոփոխությունները առնվազն 5 աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:

21. Հաստատությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն), կրթության շարունակությունը ապահովելու համար կարող է հանրակրթական հիմնական կրթական ծրագրերը իրականացնել հեռավար ուսուցման ձևով:

22. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն), կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների և սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակաշրջանում: Սույն փոփոխությունները կարող է կատարել նաև հաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու, ինչպես նաև ըստ հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

23. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը: Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հավելվածի 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի հիմնադրամը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ՝ Նախարարության համաձայնությամբ:

24. Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին հիմնգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱՊՈՒՄՆԵՐ

25. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորագրված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով,

2) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը պետական պարտադիր առարկաներին բաշխելու դեպքում ուսուցումն իրականացվում է սույն Ուսումնական պլանի միջնակարգ դպրոցի, ինչպես նաև ավագ դպրոցի հոսքերի ուսումնական պլանների ընդհանուր համարակրթական առարկաների համար նախատեսված ծրագրերով,

3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Եկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ և 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումն այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո: Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո,

4) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով տվյալ Հաստատության, տվյալ դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով,

դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից,

5) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է,

6) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

26. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանի 1-ին կիսամյակում ուսումնասիրվող հանրակրթական պետական ծրագրի Ուսումնական պլանի նորմատիվային ծավալը սահմանվում է շաբաթական 34 դասաժամ՝ ապահովելով 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրությունը,

2) Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է 12-րդ դասարանի 1-ին կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (պետական ավարտական քննությամբ), բացառությամբ «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար ընտրված առարկաների,

3) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից՝ ապահովելով առնվազն 31 դասաժամ,

4) Նորմատիվային 34 դասաժամի և սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում է սովորողը,

5) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությամբ,

6) «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնասիրությունը (կրկնությունը) ավարտվում է 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) պետական ավարտական քննությամբ,

7) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողները ընթացիկ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում, մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաև միասնական քննական առարկաները,

8) Եթե Հաստատության ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկաներ) դասարանի սովորողներից ոչ մեկը չի ընտրել, ապա այդ առարկային(ներին) ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը վերաբաշխվում է տվյալ դասարանի սովորողների կողմից ընտրված ուսումնական առարկաներին, և կազմվում է տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը,

9) Դասարանի ուսումնական պլանին համապատասխան՝ կազմվում է տվյալ դասարանի դասացուցակը,

10) Մեկից ավելի դասարանների առկայության դեպքում կարող են ձևավորվել միևնույն առարկան ուսումնասիրող զուգահեռ դասարանների սովորողներից կազմված ուսումնական խմբեր: Այդ դեպքում տվյալ ուսումնա-

կան առարկայից անհրաժեշտ գրանցումները կատարվում են առարկայական դասամատյանում: Կիսամյակային և տարեկան գնահատականներն այնուհետև փոխանցվում են դասարանի հիմնական դասամատյան,

11) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնական նյութի կրկնությունը կազմակերպվում է դասարանային (դասացուցակին համապատասխան) և արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներով,

12) Սովորողը մասնակցում է միայն իր ընտրած առարկաների դասարանային ուսումնական պարապմունքներին,

13) Սովորողը մասնակցում է արտադասարանային ուսումնական պարապմունքներին այն դեպքում, երբ դասացուցակով նրա շաբաթական բեռնվածությունը պակաս է 31 դասաժամից,

14) Սովորողի արտադասարանային պարապմունքներին մասնակցության տևողությունը որոշվում է 31 ժամի և սովորողի դասացուցակային բեռնվածության տարբերությամբ,

15) Արտադասարանային պարապմունքներին սովորողի(ների) մասնակցությունը հաշվառվում է և գրանցվում է համապատասխան մատյանում դասուղեկի կողմից,

16) Արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներ են ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունների կատարումը, լրացուցիչ ուսումնական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրումը, գործնական և փորձնական աշխատանքների կատարումը, ուսումնական նախագծերի իրականացումը, հիմնահարցերի հետազոտումը, ստեղծագործական աշխատանքը, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարումը, գրավոր աշխատանքները, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի կիրառումը, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարումը, ուսումնական էքսկուրսիաների անցկացումը և այլն,

17) Սովորողն իր տնօրինմանը հատկացված 3 ժամը կարող է օգտագործել կրթական այլ ծառայություններ ստանալու նպատակով՝ տվյալ Հաստատությունում կամ այլ հաստատություններում:

27. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից 1-ինը ռուսերենն է, 2-րդը՝ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն կամ Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի ունեցող այլ լեզու,

2) Հաստատությունը իր ընտրությամբ կարող է ունենալ ռուսերենի խորացված ուսուցմամբ դասարան (ներ):

3) Հաստատության ընտրությամբ 3-րդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-6-րդ դասարաններում (շաբաթական 3 ժամ) և 7-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: 5-րդ դասարանում՝ 3-րդ, 4-րդ և 6-րդ դասարաններում՝ 5-րդ, 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար հատկացվում են երկուական ժամ դպրոցական բաղադրիչից և մեկական ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից. 10-րդ դասարանում հատկացվում է շաբաթական 2 ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից,

4) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ Հաստատության ենթակայության Լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող 2-րդ օտար լեզուն (անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն և այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասա-

վանդվող 2-րդ օտար լեզուն:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

28. Հանրակրթական դպրոցի դասարանը կազմավորվում է տվյալ դասարան փոխադրված և ընդունված սովորողների ընդհանուր թվի միջին թվաբանականի հաշվարկով: Տարրական և միջին դպրոցների դասարաններում սովորողների թիվը սահմանվում է 25-35, իսկ ավագ դպրոցում՝ 20-30 սովորող: Դասարանում սովորողների առավելագույն թիվը տարրական և միջին դպրոցում չի կարող գերազանցել 35-ը, ավագ դպրոցում՝ 30-ը: Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Հաստատության ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ Հաստատության խորհրդի որոշմամբ:

29. 2022-2023 ուսումնական տարվանից «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) առարկան դասավանդվում է սկսած 7-րդ դասարանից՝ տրամադրելով դպրոցական բաղադրիչից 1 ժամ:

30. Տարրական դպրոցում «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Շախմատ», միջին դպրոցում և ավագ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 26 և ավելի է:

31. Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակը այդ առարկային տրամադրելու դեպքում:

32. «Տեխնոլոգիա» առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

33. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկաների ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

34. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին,

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը,

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2023 թվականի հունվար-փետրվար ամիսներին,

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

35. 6-րդ դասարանում «Կերպարվեստ» ուսումնական առարկան դասավանդվում է 1-ին, իսկ «Երաժշտություն»-ը 2-րդ կիսամյակում, 7-րդ դասարանում «Երաժշտություն» ուսումնական առարկան դասավանդվում է 1-ին կիսամյակում, իսկ «Կերպարվեստ»-ը 2-րդ՝ ապահովելով Հաստատության ուսումնական պլանով սահմանված տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակի պահպանման պահանջը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

36. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներին: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար նպատակահարմար է օգտագործել էլեկտրոնային ուսումնական նյութեր:

37. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարելու նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

38. Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզկուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով, Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզկուլտուրա» առարկայից չի կատարվում:

4. ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ԶԱՆՐԱԿՐԹԱՆՈՒԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀՈՍՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՎԱԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

39. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) ուսումնական պլանը սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ ուսուցողական հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաների հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

40. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

- 1) հիմնական - հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,
2) ընդհանուր:

41. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների ուսումնական պլանները ըստ հոսքերի տրված են՝

- 1) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի),
2) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 2-ի),
3) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 3-ի),
4) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի):

42. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2022 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2023 թվականի

մի մայիսի 26-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 27-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 34 ուսումնական շաբաթ ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար: Բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական շաբաթվա տևողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ 15-օրյա ժամկետում համաձայնեցնելով Նախարարության հետ:

43. Ավագ դպրոցում գործում է գնահատման տասը միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է տասը միավորային գրանցման:

44. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

45. Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականներ՝ բացառությամբ այն առարկաների, որոնց ուսումնասիրությունը ավարտվում է 12-րդ դասարանի 1-ին կիսամյակի վերջում:

46. Ուսումնական պարապմունքների ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ, աշնանային՝ 2022 թվականի հոկտեմբերի 24-30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ից 2023 թվականի հունվարի 8-ը ներառյալ, գարնանային՝ 2023 թվականի մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

47. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող՝ ուղրտը կարգավորող նորմերի պահպանմամբ:

48. Ավագ դպրոցի ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական բաղադրիչի «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի, եթե տվյալ դասարանի սովորողների թիվը 20 և ավելի է:

49. Ավագ դպրոցի միևնույն դասարանի(ների) սովորողներն ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող 2-րդ օտար լեզվի (անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

50. 12-րդ դասարանում ուսումնական գործընթացն իրականացվում է սույն հավելվածի 26-րդ կետի պահանջներին համապատասխան:

51. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը.

1) Հոսքային (խորացված) ուսուցման ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և դպրոցական բաղադրիչներից.

ա. Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար,

բ. Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որոշակի որակավորումների շրջանակում հա-

մապատասխան հմտությունների ձեռքբերմանը.

գ. Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ՝ տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով մոր առարկա(ներ)՝ Ավագ դպրոցի առաջարկության և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում,

դ. Դպրոցական բաղադրիչն ընդգրկում է հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները և դրանց ուսուցման համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով,

ե. Ավագ դպրոցը Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուսումնական տարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին,

զ. Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից,

է. 10, 11-րդ և 12-րդ դասարաններում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

52. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական և հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին,

2) Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Արևմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Բարոյագիտություն» (10-րդ դասարան), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Ատոմագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11-րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն» և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դա-

սարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարան), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո,

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև մոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

53. 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին,

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը,

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2023 թվականի հունվար-փետրվար ամիսներին,

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

54. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն կամ որևէ այլ լեզու,

2) Հաստատության ընտրությամբ 3-րդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու (անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն և այլն) կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով (շաբաթական երկու ժամ), ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում,

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում,

4) Նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող 2-րդ օտար լեզուն Հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:

1) Սույն հավելվածի Աղյուսակ 2-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորհրդում ուսուցման առարկաներ, սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական են համարվում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները,

գ. «Օտար լեզու-1» և «Ռուսաց լեզու-1» առարկաներն ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու-2» առարկաները,

2) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ՝ համաձայն սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պարզաբանման: Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները,

3) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն

ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և (կամ) ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 2-ի)՝ 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0,5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի),

5) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 3-ի)՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողը ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական են համարվում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները,

գ. «Օտար լեզու-1» առարկան ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» առարկան,

6) Սույն հավելվածի Աղյուսակ 3-ում՝

ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկա(ներ) ընտրելու դեպքում չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկան(երը),

բ. Բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ու-

սումնական պլանի դպրոցական բաղադրիչին,

գ. Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 25-րդ կետի «Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգի» համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է հոսքային և ընդհանուր հանրակրթական առարկաների՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված առարկայական ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

դ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով,

ե. Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու-1» առարկան, ապա շարունակում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու» առարկաների համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը,

զ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել սույն հավելվածի Աղյուսակ 3-ի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով,

7) Սույն հավելվածի Աղյուսակ 4-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական են համարվում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները.

8) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի)՝

ա. մասնագիտական դասընթացների (առարկաների) ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը,

բ. ուսումնական պլանով 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի ժամաքանակը տնօրինվում է սույն հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ ներառյալ ուսումնական պրակտիկայի կազմակերպումը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և (կամ) ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

գ. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի),

9) Ռուսերենի խորացված ուսուցմամբ և ռուսերենով ուսուցմամբ հիմնական և միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) Ուսումնական պլանի (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 5-ի և Աղյուսակ 6-ի)՝ «Մայրենի» (հայերեն) առարկայի դասաժամերը 1-ին դասարանում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, տառուսուցմանը,

10) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ 6-9-րդ դասարաններում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային լրացուցիչ դասաժամեր չեն հատկացվում,

11) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև (ոչ պակաս քան 21 օր) բուժվող երեխաների անհատական ուսուցման Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 7-ի)՝

ա. ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի (տարրական դպրոցում՝ «Մայրենի», միջին և ավագ դպրոցում՝ «Հայոց լեզու և գրականություն») առարկաների համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը: 1-ին դասարանում ռուսաց լեզվին հատկացված ժամաքանակից 2 ժամը տրվում է հայերենի («Մայրենի») ուսուցմանը,

բ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժփնտրակի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ ըստ Հաստատության ենթակայության՝ համապատասխան Լիազորված մարմնի գիտությամբ: Տնային ուսուցում կազմակերպվում է վնասվածքների և հիվանդությունների դեպքում, որոնք հանգեցնում են տեղաշարժման սահմանափակման կամ տնային պայմաններում խնամքի կամ մեկուսացման կազմակերպված անհրաժեշտության՝ հիվանդության սկզբից 22 և ավելի օր տևողությամբ,

գ. տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն Հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը: Տնային ուսուցում կարող է կազմակերպվել հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ,

դ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուսումնական տարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով,

ե. հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ դասարանների՝ վերոնշյալ կարգի պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունը սպասարկող ուսումնական Հաստատության կողմից (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 7-ի):

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Աղյուսակ 1

Table with 12 columns (I-XII) and 30 rows of subjects and their distribution across classes. Includes subjects like 'Մայրենի', 'Հայոց լեզու', 'Գրականություն', etc.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Աղյուսակ 2

Table with 3 columns (X, XI, XII) and 15 rows of subjects and their distribution across classes. Includes subjects like 'Հայոց լեզու-1', 'Հայ գրականություն-1', etc.

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

7

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՅԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ
ՀՈՍՔԻ 10-12-ՐԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Աղյուսակ 3

Առարկայախումբ	Առարկա	Հարաբերական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցման առարկաներ ¹	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն) -1	7	8	8
	Ֆիզիկա - 1	4	5	8
	Քիմիա - 1	4	5	8
	Կենսաբանություն -1	4	5	8
	Աշխարհագրություն -1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
	Օտար լեզու -1	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
	Հայոց լեզու	2	2	2
Հայ գրականություն	2	2	2	
Հայոց պատմություն	2	2	2	
Հասարակագիտություն	2	1,5	1	
Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	5	
Բնագիտական առարկա ²	2	1	1	
Բնագիտական առարկա ²	1	1	-	
Բնագիտական առարկա ²	1	1	-	
Բնագիտական առարկա ²	1	-	-	
Ինֆորմատիկա	1	2	1	
Օտար լեզու-2	2	2	2	
Ռուսաց լեզու	1	1	1	
Ֆիզկուլտուրա	3	3	1	
ՆԶՊ	1	1	1	
Դպրոցական բաղադրիչ				
Ընդամենը		34	34	34

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՅԻ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ
ՀՈՍՔԻ 10-12-ՐԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Աղյուսակ 4

Առարկայախումբ	Ուսումնական առարկաներ	Հարաբերական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Մասնագիտական դասընթացներ (առարկաներ) ¹		9	13	15.5
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա ²	2	1	1
	Բնագիտական առարկա ²	1	1	-
	Բնագիտական առարկա ²	1	-	-
	Բնագիտական առարկա ²	1	-	-
	Ինֆորմատիկա և SՀՏ	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ	1	1	1
Դպրոցական բաղադրիչ				
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 5

**ՌՈՒՄԵՐՆԵՒ ԽՈՐԱՎԱԾ ՌԻՍՈՒՄՆԱԿ 1-9-ՐԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Ուսումնական առարկաներ	Հարաբերական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	3	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	1	1	1.5	1.5	1.5	1.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35

Աղյուսակ 6

**ՌՈՒՄԵՐՆԵՒԿ ՌԻՍՈՒՄՆԱԿ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԳՊՐՈՅԻ (ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ)
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Ուսումնական առարկաներ	Հարաբերական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	-	1.5	0.5	0.5	1	-	0.5	2.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Աղյուսակ 7

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆՊԱՆՈՅԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵՒՍՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Table with 12 columns (I-XII) and 17 rows of data for various indicators like 'Մայրենի', 'Հայրց լեզու և գրակ.', 'Ռուսաց լեզու', etc.

Աղյուսակ 8

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆՊԱՆՈՅԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ՄԻՋԻՆ ԵՎ ՇՆՆՐ ՄՏԱՎՈՐ ՇԵՏԱՄՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Table with 9 columns (I-IX) and 8 rows of data for indicators like 'Լեզու և ընթերցանություն', 'Մաթեմատիկա', 'Ես և շրջակա աշխարհը', etc.

ԱՆՅՎԱՅՎԵՑ ԵՑ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՏՈՒՄԸ

Օգոստոսի 11-13-ը Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցում կայացել է գործող և նոր ուսումնականից շարք մտնող (Առաջածորի, Վաղուհասի միջնակարգ դպրոցների և Ստեփանակերտի «Անտոնիա Արսևան հայ-իտալական կրթահամալիր»-ի) երկարօրյա դպրոցների՝ ընդհանուր հաշվով 17, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Ինչպես տեղեկացանք ԱԶ ԿԳՄՍՆ ԵՕ բաժնից՝ նախորդ փուլում ընդգրկված դպրոցների տնօրեններն ու ԵՕ ուսուցիչները ներկայացրին իրենց փորձը: Նոր դպրոցները նախագծեցին երկարօրյա ուսուցման հնարավոր դասապլանն ու վերջինիս բաղադրիչները:



Դասընթացները վարել են ճանաչված մասնագետներ՝ կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Սմբատ Գոգյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Թամար Ալեքսանյանը, Արցախում ԵՕ ծրագրի համակարգող Վահրամ Սողոմոնյանը:

յանը, ԵՕ պարապմունքների նշանակությունը տարբեր շահառու խմբերի համար (աշակերտներ, ծնողներ, ուսուցիչներ, դպրոց, համայնք), ինչպես նաև ԵՕ՝ բովանդակային ուղղությունների և կառավարման (իրականացման) մեխանիզմները, դերակատարները, մե-

թողները՝ ըստ ուսուցման տեսությունների ներկայացրեց Ս. Խաչատրյանը: Լեզվական գրագիտության կարողունակության զարգացման մեթոդների ու հնարների, միջառարկայական և վերառարկայական մոտեցումների մասին խոսեց Թ. Ալեքսանյանը: Առարկայական և ԵՕ ուսուցիչների համար օգտակար ռեսուրսներ փոխանցեց Ս. Գոգյանը: ԵՕ մեկ տարվա իրենց հաջողված փորձը ներկայացրին Բերդաշենի և Հաթերքի դպրոցների տնօրենները, ինչպես նաև դասա-

պատրաստողներ: Այսպես, Հաթերքի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ծաղիկ Աբրահամյանը կիսվել է իր օրինակի դասով: Ըստ նրա՝ ամենալավ մեթոդը դասը խաղի ձևով անցկացնելն է: Երեխաները բաժանվում են թիմերի, և սկսվում է խաղ-մրցույթը: Մրցակցային մթնոլորտը աշակերտներին օգնում է արագ ինտեգրվել դասին, հետաքրքրություն է առաջացնում ուսումնասիրվող թեմայի նկատմամբ, ստիպում է անընդհատ պրպտել՝ գտնելու նոր փաստեր ու փաստարկումներ:

Ուսումնական տարվա ընթացքում նա նպատակադրվել է զարգացնել աշակերտների գի-

տակով հաճախ են պատրաստում զանազան իրեր, զբաղվում նկարչությամբ և այլն: Նմանատիպ աշխատանքները ոչ միայն բխում են առարկայական ծրագրից, այլև ապահովում են հաճելի ժամանց: Ուսուցչուհին վստահեցնում է, որ թեպետ ինտերակտիվ մոտեցումները նպաստում են նյութի մատչելի յուրացմանը, բայց այդ ամենը չեն բացառում ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ուսուցման համար:

Ինչպես տեղեկացրեց ԵՕ բաժնի պետ Ալեմուշ Գրիգորյանը, նոր շարք մտնող ԵՕ Առաջածորի և Վաղուհասի դպրոցները համարվել են պահանջվող մասնագետներով, իսկ «Անտոնիա Արսևան հայ-իտալական» կր-



տելիքներն ու հմտությունները մաթեմատիկա առարկայից, քանի որ կա պասիվ վերաբերմունք այս առարկայի նկատմամբ: Աշակերտները մեծ հետաքրքրություն են դրսևորում, երբ կարողանում են դիդակտիկ պարագաներով ինքնուրույն կազմել խնդիրներ և լուծել: Նմանատիպ առաջադրանքները ոչ միայն նպաստում են թեմայի յուրացմանը, այլև զարգացնում են մաթեմատիկական մտածողությունը:

Բերդաշենի միջնակարգ դպրոցի առաջին խմբի ուսուցչուհի Արմիդա Աղաբեկյանը պատմում է, որ ուսումնական տարվա ընթացքում առանձնացրել է այն բոլոր մեթոդներն ու հնարները, որոնք ապահովել են բարձր արդյունավետություն: Օրինակ, մայրենիի ժամերին աշակերտները նյութը լավ են յուրացրել այն դեպքում, եթե կիրառվել են հետևյալ խաղերն ու մեթոդները՝ խաղ-վարժություն, չարածի և խելոք բառերի խաղ, վանկախաղ, «Հայկական առածներ» վերնագրով լուտո: Աշակերտների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու նպա-

թահամալիր»-ի ԵՕ-ի համար հայտ էր ներկայացրել 50 հոգի, որից 10-ը հրաժարվել է: Այդ 40-ից նախնական հարցումներով ընտրվել և դասընթացներին մասնակցել է 15 ուսուցիչ, որից 5-6-ը կաշխատեն, իսկ մյուսները կգրանցվեն ռեզերվում՝ առաջիկայում բացվող ԵՕ դպրոցների համար (նախատեսված է Ստեփանակերտի հ. 5 և հ. 10 դպրոցներում):

Ա. Գրիգորյանի տեղեկատվությամբ՝ քանի որ հավակնորդները մեծ թիվ են կազմում, նրանց միջև կանցկացվի մրցույթ: Եվ ընդհանրապես, ԵՕ ուսուցիչները նույնպես կընտրվեն մրցութային կարգով, ինչպես մյուս ուսուցիչները:

Հաջորդ փուլում կվերապատրաստվեն ԵՕ խոհարարները:

Սեփ. լրատվություն



ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ

ԱՄՈՒՐ ՊԱՆՏԵՆԵՐ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ

Հայ ժողովուրդը դարեր շարունակ իր հոգում վառ է պահել սերը հայրենիքի նկատմամբ, սերը Աստծո՝ ու հավատքի նկատմամբ: Հայ ժողովուրդը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին հաշվել է հոգու ծննդավայր, փրկության տապան, միության, համախմբվածության ակունք ու հարստանան բանալի:

Ինչպես շատ ժողովուրդներ, հայ ժողովուրդն իր կազմավորման շրջանից սկսած, երկրպագել է հեթանոս աստվածների, կուռք է դարձրել նրանցից շատերին և ինչ-որ տեղ փորձել է ապավինել նրանց: Բնական երևույթների աստվածացումը և կուռքերի պաշտամունքը կոչվում էր հեթանոսություն: Հեթանոս աստվածների մասին առասպելներ է հյուսել, որոնցից շատերը հասել են մեր օրերը: Հեթանոս աստվածների անունները դարեր շարունակ չեն կորցրել իրենց հնչեղությունը և մնացել են մեզ համար սիրված հասոյից շատերին: Հեթանոս 13 աստվածներից Արամազդը եղել է բոլոր աստվածների հայրը, հայոց դիցարանի գերագույն աստվածը: Անահիտ, Աստղիկ, Արա, Ծովինար, Հայկ, Նանե, Վահագն աստվածների անունները շարունակում են մնալ սիրված, տարածված հասոյի անուններ: Գառնի հեթանոսական տաճարը (1-ին դարի կառույց) վկայում է, որ հայ ժողովուրդը ամեն ինչ արել է, որ ի հեթանոս աստվածների նկատմամբ հավատն ամրապնդվի ու մտնի կենցաղ, դառնա մշակույթ: Շուրջ 2000 տարվա պատմություն ունեցող այս ճարտարապետական գլուխգործոցը 1679թ. ավերվել է երկրաշարժից, վերականգնվել է 1975թ. (ճարտարապետ՝ Ա. Սահյան):

Ակած 1-ին դարից եվրոպական շատ երկրներում ի հայտ եկան նոր աստծո՝ Հիսուս Քրիստոսի մասին ուսմունքի քարոզիչներ: Քրիստոսի համբարձումից հետո առաքյալները (Քրիստոսի աշակերտները, ուսմունքի քարոզիչները) շրջեցին աշխարհով մեկ՝ տարածելու իրենց վարդապետի սովորածը: Ըստ ավանդության՝ Հայաստան աշխարհ են եկել Սուրբ Թադևոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները: Նրանք եղան առաջին լուսավորիչները Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու: Սուրբ Թադևոս առաքյալը Հայաստանում եղել է 34-43 թթ.: Արքայի և Սանատրուկի թագավորների օրոք: Քարոզել է քրիստոնեություն և նահատակվել Սանատրուկի թագավորի հրամանով: Սուրբ Բարդուղիմեոս առաքյալը Հայաստանում եղել է 43-60 թթ.: Նա նույնպես նահատակվել է Սանատրուկի թագավորի գահակալության ժամանակ: Ինչպես երևում է, քրիստոնյա քարոզիչների աշխատանքները դյուրին չեն եղել, և նրանց նկատմամբ հալածանքները շարունակվել են երկար ժամանակ: (Այդ է վկայում Հովհաննէս Գայանէ, Շողակաթ և մյուս կույսերի նահատակվելը):

Եվ միայն 301թ. Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզչությամբ ու ջանքերով և Տրդատ Գ Մեծ թագավորի հրովարտակով քրիստոնեությունը հասնակվեց որպես պաշտոնական և պետական կրոն Հայաստան աշխարհում: Հայերը աշխարհի ժողովուրդներից առաջինն էին, որ քրիստոնեությունը հռչակեցին պետական կրոն: (Հռոմում նույնը կատարվեց շուրջ երկու տասնամյակ հետո միայն՝ 324թ.): Հայ եկեղեցին կոչվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի: Առաքելական է կոչվում ի պատիվ հիմնադիրների՝ Հիսուս և Քրիստոսի առաքյալների Ս. Թադևոսի և Ս. Բարդուղիմեոսի: Եկեղեցի ասելով պետք է հասկանանք Հիսուսին հավատացողների, հետևորդների հավաք, նաև այն կառույցը, ուր հավատացյալները հավաքվում են աղոթելու Հիսուս Քրիստոսի անունով: Եկեղեցին կոչված է դաստիարակելու ժողովրդին քրիստոնեական հավատքով, օգնելու, որ այդ հավատքն արտահայտվի ժողովրդի կյանքում ու կենցաղում: Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու առաջին և մայր եկեղեցին Ս. Էջմիածին Մայր տաճարն է, կառուցվել է 301-303 թթ.: Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքում: Մայր տաճարին հարակից 301թ. հաստատվել է Ամենայն հայոց կաթողիկոսությունը: Այդ թվից առաջուր առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի գահին բազմել է 132 կաթողիկոսներ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանը այդ հոգևոր պաշտոնին է 1999 թվականից: Մինչև Կաթողիկոսության հաստատումը (301թ.) հոգևոր գործը կառավարվում էր հայրապետների կողմից: 34 թից մինչև 270թ. այդ պաշտոնն զբաղեցրել են 10 հայրապետներ:

Կաթողիկոսություն է հիմնադրվել նաև Կիլիկիայի Սիս քաղաքում 1446թ.: Հիմնադիրը եղել է Կիրակոս Ա Եվրոկացին: Մեծ եղեռնից հետո Կիլիկիան նույնպես հայաթափվեց, և կաթողիկոսության աթոռը 1930թ. տեղափոխվեց Լիբանանի Անթիլիաս գյուղը: Մեծի տան Կիլիկիո կաթողիկոսության գահին բազմել են 41 կաթողիկոսներ: Արամ Ա կաթողիկոսը այդ գահին է 1995 թվականից: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու

նվիրապետական աթոռներ են երուսաղեմի և Կ.Պոլսի պատրիարքությունները, ինչպես նաև եկեղեցական թեմեր Հայաստանի մարզերում, Արցախում և աշխարհի շատ այլ երկրներում: Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռանիստ եղել են 12 բունկավայրեր: Առաջինը Էջմիածինն է, եղել է 301-484/5 թվականներին, ինչպես նաև 1441 թվականից մինչև օրս: Շուրջ չորս ու կես դար կաթողիկոսության աթոռանիստ եղել է Դվին քաղաքը, մեկ ու կես դար՝ Սիս քաղաքը: Այդ բախտին ամենակարծ ժամկետով՝ ընդամենը 3 տարի, արժանացել է Թավրուզը (բնակավայր կամ վանք 1062-1065 թթ.):

Աստծո խոսքը հասարակությանը հասանելի է Աստվածաշնչի միջոցով: Դա այն Սուրբ գրքերի ժողովածուն է, որ 1500 տարիների ընթացքում Սուրբ հոգով ներշնչված՝ գրել են շուրջ 4 տասնյակ հեղինակներ: Այն կազմված է Հին Կտակարանից՝ մինչև Քրիստոսի ծնունդը և Նոր Կտակարանից՝ Քրիստոսի ծննդից հետո: Հիսուս Քրիստոսի ուսմունքը կոչվում է Ավետարան: Այն ծագել է հունարեն «բարի լուր, ավետիս» բառից: Աստվածաշունչը առաջին տպագրի գիրքն է աշխարհում, տպագրվել է 1452-1455 թթ.: Այն թարգմանվել է ավելի քան 1900 լեզվով, իսկ եթե նկատի առնվեն նաև բարբառները, ծայնապակները, պնակիրները և այլն, ապա այն հասանելի է 4300 լեզվով: Այն միաժամանակ ամենաշատ ընթերցվող գիրքն է: Աստվածաշունչը հայերեն թարգմանել են Ս. Մաշտոցը և Ս.Պարթևը իրենց շակերտների հետ միասին 5-րդ դարի սկզբին: Հայերեն տպագրվել է 1666-1668 թթ.: Հայերեն թարգմանությունը այնքան էր հաջողված, որ այն կոչեցին «Թարգմանությունների թագուհին»:

Քրիստոնեության ընդունումը և որպես պետական կրոն հռչակումը շրջադարձային նշանակություն ունեցան հայ ժողովրդի քաղաքացիական, կրոնական և մշակութային կյանքում: Նրա շուրջ համախմբվեցին շինականն ու արհեստավորը, իշխանն ու զինվորը: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին իր գործունեությամբ, ժողովրդին նվիրվածությամբ ազատապիտու հայության շրջանում ծավալվող համայնքատու գաղափարախոսությամբ դարձավ մեր ժողովրդի ինքնության հիմնասյուներից մեկը: Այն դարձավ հայոց պետականության համար գաղափարական նոր հենարան, որը ծավալ ամրապնդեց մի վահան արտաքին, կրոնական, գաղափարաքաղաքական հարձակումների դեմ: Հայոց եկեղեցին միշտ էլ եղել է ժողովրդի հետ, նրան զերծ է պահել ծուլման վտանգից, կատարել է ազգապահպան դեր: Նա համասփյուռ հայությանը միավորող հուսալի կամուրջ է հանդիսացել: Հայոց եկեղեցին համազգային այն կառույցն է, որ մշտապես իր ժողովրդի խորհրդատուն, ուսուցանողն ու բարոյական նեցուկն է եղել, կանգնած է եղել հայրենի պետության կողքին, իսկ անկախ պետականության բացակայության պայմաններում դարձել է ողջ հայությանը համարողու, հուսադրող, կազմակերպող ուժը: Քրիստոնեության ընդունման վաղ շրջանից սկսած հայերն ստիպված են եղել այն արդեն որպես վահան օգտագործել Պարսկաստանի դեմ: Երբ բռնակալ պարսիկները հայերից պահանջել են զրադաշտական հավատ ընդունել, դառնալ կրակապաշտներ, հզոր Պարսկաստանին կույ չգնալու համար երկրին հակադրել են քրիստոնեական խաչը, իսկ երբ Հռոմն էր ուզում կլանել Հայաստանը, հայն իսկույն ուրույն ազգային երանգ տվեց իր քրիստոնեական հավատքին, անջատվեց «տիեզերական» քրիստոնեությունից՝ նրան, ինչպես նաև Բյուզանդիոսի գաղափարական խավարին հակադրելով Գրիգոր Լուսավորչի կանթեղը: Իսկ երբ տեսավ, որ իր ուրույն հայ քրիստոնեության քարոզը եկեղեցիներում օտար լեզուներով (ասորերեն, հունարեն) է հնչում, զգաց, որ կարող է վտանգի տակ դնել մայրենի լեզուն ու ժողովրդի գոյությունը, իսկույն ստեղծեց իր այբուբենը՝ իր գրավոր լեզուն, իր հավատքն իր լեզվով քարոզելու, ինքնիշխան մնալու, ինքնությունն ամրապնդելու համար: Այդ մեծ առաքելությունը իրենց վրա վերցրին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու սպասավորներ, վարդապետ Ս. Մաշտոցը՝ կաթողիկոս Ս. Պարթևի համաձայնությամբ:

Հանուն քրիստոնեական հավատի աշխարհում տեղի ունեցան առաջին պատերազմը մղել է Հայաստանը հռոմեական Մաքսիմիանոս Դայա կայսեր դեմ, երբ վերջինս փորձում էր Հայաստանում վերստին հաստատել հեթանոսություն: Հռոմեացիները պարտություն կրեցին: Գրիգոր Լուսավորչից հայոց եկեղեցու ոչ միայն առաջին, այլ նաև մեծագույն հայրապետն է: Նրա ջանքերով քրիստոնեությունը տարածվեց Գրաստանում, Աղվանքում, Ատրպատականում: Գրիգոր Լուսավորչը միաժամանակ հայ քրիստոնեական գրականության հիմնադիրն է: Պահպանվել են նրա գրած եկեղեցական 30 կանոն-

ները, աղոթքները, ժամագիրքը: Նա է կազմել հայ ժողովրդի ազգային սովորույթներին համապատասխանող «Ծիսարան», յուրահատուկ արժեք ունի նրա գրած «Հաճախապատում» քարոզների գիրքը:

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին դարձավ ոչ միայն պետության հիմնական հենարանը արտաքին ու ներքին քաղաքականության մեջ, այլև մշակեց ու սկսեց իրականացնել բարոյական հիմնարար կատեգորիաներ, որոնք արտահայտում են հասարակության լայն շրջանակների շահերը: Արգելվեցին հեթանոսական որոշ ավանդույթներ, ի հայտ եկան ժողովրդին կարեկցելու, զբասիրտ վերաբերմունք դրսևորելու նորմեր: Այս բոլորի նախաձեռնողը եղավ Ներսես Ա Մեծ կաթողիկոսը (Գրիգոր Լուսավորչի տոհմից): Նրա ջանքերով 354թ. գումարվում է Աշտիշատի հայոց առաջին ազգային եկեղեցական ժողովը: Որոշում ընդունվեց արգելել բազմակնությունը, անչափահասների ամուսնությունը մերժելու արյունակիցների միջև: Եկեղեցին օգտվեց իրեն տրված դատավարության իրաւորից և ժողովուն հատուկ պատիժներ սահմանեց հարբեցողության, զոդության, սպանության և այլ հանցանքների համար: Ժողովն առաջ մղեց քրիստոնեական ուսմունքի կրթարար պատգամներից մեկը՝ լինել զբասիրտ միմյանց նկատմամբ, իշխանավորներին պատվիրեց զբասիրտ լինել իրենց ծառաների նկատմամբ, իսկ ծառաներին՝ հավատարիմ և հնազանդ լինել տերերին: Գթաբարությունից և մարդասիրությունից ելնելով՝ ժողովը որոշում է Հայաստանի տարբեր վայրերում հիմնել հիվանդանոցներ, որբանոցներ, աշխատանոցներ, ապաստարաններ, իջևանատներ և օթևաններ: Աշտիշատի ժողովը վճռական քայլ էր քրիստոնեության ամրապնդման համար: Ներսեսը հայոց եկեղեցու ամենամշահավոր գործիչներից է: Նա արժանացել է «Մեծ» կոչման: Նրան անվանել են նաև «Հայոց հայրը», «Սուրբի լուսավորիչ»: Փափատու Բուզանդը գրել է. «Ներսեսը աստվածավախ, Աստծու պատվիրանների հանդեպ ավանդապիտ, մարդասեր, սուրբ, սթափ հայրապետ էր... Նրա նման մեկը չեղավ աշխարհում»:

4-րդ դարի վերջից սկսած Հայաստանը թևակոխում է պատմական իրադարձությունների զարգացման բուն շրջան: Իրադարձությունները զարգանում են ոչ հայաստանյայց ուղիներով: Արդեն 387թ. Հայաստանը բաժանվում է Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (Հայաստանի առաջին բաժանումը): Երկփեղկվում է նաև հայոց եկեղեցին: Պատմությունը դաժան հողմերը հանգիստ չէին տալիս Հայաստան աշխարհին: Ցավոք, Արշակունի պայազատները այդ հողմերը սանձելու ուժ չայլև չունեին: Պատճառը պարսկա-հռոմեական սեղանող օրակն էր, գումարած որոշ նախարարների ատելությունը Արշակունիների նկատմամբ և նրանց կենտրոնախույս տրամադրությունները: Հայոց եկեղեցին ամեն ինչ մեկը Արշակունյաց գահակալությունը պահպանելու համար, սակայն ուժերն անհավասար էին, սեղանող օրակն հանգեցրեց նրան, որ 428թ. Արշակունյաց գահակալությունը վերջնականապես դադարեց գոյատևելուց: Ձրկվելով պետականությունից՝ Հայոց եկեղեցին մնաց մեծակ Պարսկաստանի և Հռոմի դեմ պայքարի թատերաբեմում: Կաթողիկոս Սահակ Պարթևը (Գրիգոր Լուսավորչի տոհմից) հոգևոր դասի հետ ամեն ինչ արեց՝ համախմբելու հայ ժողովրդին, ջանք չխնայեց հակապարսկական խնդրումները հայության հոգում ամրապնդելու համար՝ գիտակցելով, որ դա միակ ուղին է սեփական հավատը պահպանելու և պարսկական մեծ մտահոգումներին դիմակայելու համար: Հազվեբարի հայտնի նամակին պատասխանել՝ նշանակում էր բացարձակ առձանապատման գնալ: Ընդվզման արդյունքը Վարդանանց պատերազմն էր 451թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում: Եղիշե պատմիչի վկայությամբ՝ «Ոչ թե մեկ կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով, երկու կողմն էլ պարտություն կրեցին»: Հակապարսկական մի հզոր ապստամբություն էլ եղավ 481-488 թթ.:

Հինգերորդ դարի ազատագրական պատերազմներն օտար նվաճողների դեմ պայքարի ամենահերոսական ու հիշարժան էջերից են: Դրանք հայ ժողովրդի ազատասեր ոգու՝ դարերի խորքից եկող պատգամն են հետագա սերունդներին: Իսկ ինչ վերաբերում է պարսկական արքունիքին, նրանք քրիստոնեությունը մեկընդմիջտ ճանաչեցին որպես Հայաստանի պաշտոնական կրոն:

Արշակունյաց գահակալության կործանումից հետո շուրջ 4,5 հարյուրամյակ Հայաստանը չունեց պետականություն: Այդ ծանր տարիներն ուղեկցվում էին օտար գալթիչների՝ արաբների դեմ մղվող անհավասար պայքարով: Հայոց եկեղեցին միակ կառույցն էր, որ այդ դժնդակ տարիներին փորձում էր հայ ժողովրդի ինքնությունը

ամրապնդել, մշակույթը զարգացնել, պայքարել աղանդավորական շարժման դեմ: Հայաստանի հոգևոր դասը հատուկ ուշադրությամբ է համագործակցում Բագրատունի իշխանների հետ, որոնց հաջողվում է տապալել արաբական լուծը և վերականգնել պետականությունը: Ճիշտ է, Հայաստանում Բագրատունիների գահակալությունը տևում է շուրջ մեկ ու կես դար, սակայն այդ ժամանակաշրջանը բնորոշվում է որպես տնտեսության, առևտրի, քաղաքաշինության, գիտության ու մշակույթի զարգացման շրջան:

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին նվիրվելով երկրի շենացման գործին՝ միաժամանակ ստիպված էր համար ու անգիջում պայքար մղել ինչպես Անթիլիոնի աղանդավորական (պավլիկյան, բուֆորյան) շարժման դեմ, այնպես էլ հռոմեական ու բյուզանդական ոտնձգությունների դեմ, որոնք ձգտում էին ոչնչացնել Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը, պատասխանել միասնությունը: Միջին դարերում Հայաստանը դառնում է օտար զավթիչների դեմ պայքարի թատերաբեմ: Մոնղոլները, թուրք-սելջուկները, բյուզանդացիները, քիչ ավելի ուշ՝ թուրքերը տասնամյակներ, դարեր շարունակ ասպատակել են Հայաստան աշխարհը, կոտորել, ավերել, թալանել, բայց նրանց չի հաջողվել ստրկացնել ազատության, անկախության ձգտող հայկական ոգին: Բոլոր այդ ժամանակներում այդ դժվարին ու պատասխանատու առաքելությունը իր վրա է վերցրել Հայոց Առաքելական եկեղեցին: Նա վառ է պահել ապագայի նկատմամբ հույսերը, երբեք չի տրտնջացել, չի հոգնել քարոզելուց, չի հոգնել ազատության ու անկախության համար աղոթելուց: Հենց Հայոց եկեղեցու զանգերի դղանջները սթափեցրին հայ ժողովրդին 1918թ.: Այդ դրանքների ուղեկցությամբ հայ գինվորն ու գյուղացին, հոգևորականը, արհեստավորն ու մտավորականը, կանայք ելան մարտի «Մահ իմացալ՝ անմահություն» Արդարապատում, Ղարաբաղի հայուն, Բաշ Ապարանում՝ թուրքին ցույց տալով իր բազկի ուժը, իր միասնականության, համախմբվածության գործընթացը և վերականգնեցին պետականությունը, որ պատմության մեջ մտավ Հայաստանի Առաջին Հանրապետություն:

Հայ ժողովրդի ազատության ու անկախության համար պայքարը մեկ անգամ ևս փայլատակեց 20-րդ դարի վերջին տասնամյակում՝ հիմնում ունենալով Արցախյան շարժումը և խորհրդային պետության փլուզման հեռանկարը: Ստեղծվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը, որ ավելի համախ շեշտվում է Հայաստանի երրորդ Հանրապետություն անվանով: Բոլոր ժամանակներում, ընդհուպ մինչև մեր օրերը, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին եղել է ժողովրդի հետ, հաղթանակների ժամանակ ոգեշնչել, սրբազան Երա հերոսներին, դժվարությունների ժամանակ նեցուկ է կանգնել, հուսադրել՝ ապավինելով Աստծո գործընթացը: Մի ձեռքում խաչ, մի ձեռքում՝ զենք, լեզվին՝ աղոթք. սրանք են եղել մեր եկեղեցու սպասավորների գործունեության շրջանակները: Մեր կաթողիկոսներից շատերն են պատմության մեջ թողել վառ էջեր, իրենց անունները փառքով պսակել, ժողովրդի և պետության շահը վեր դասել ամեն ինչից, եղել բարու, գիտելիքի, կրթության ու գթության սերմնացաններ: Նրանցից մի քանիսի գործունեության մասին շեշտեցի վերևում, այդ շարքը երևելի անուններով կարելի է շարունակել՝ Ներսես Աղայեցի (Շնորհալի), Ներսես Աշտարակեցի, Պարթև Քելեսեանցյան (նրանց անվան հետ են կապված Ներսիսյան դպրոցը, Պարթևյան ճեմարանը), Սկրտիչ Ա Վանցի (հորինյան Հայրիկ), Խորեն Ա Սուրբաղբեղյան, Պարթև Պարթևյան, Վազգեն Ա Պալմյան (նրանք գործել են խորհրդային աթեիստական գաղափարախոսության դժվարին պայմաններում), Գարեգին Բ Ներսիսյան:

Եկեղեցին ժողովրդին սովորեցնում է հարագատ մնալ Աստծո 10 պատվիրաններին՝ որպես խորհուրդներ՝ հոգու և խղճի վրա անըբեր չբարդելու համար: Որովհետև Աստծո պատվիրանները «Սուրբ ու թանկ են, ինչպես հայրենիքը, հացը, օգտակար են, ինչպես օդը, ջուրը, արևը, բարձր ու վեհ են, ինչպես երկինքը, Արարածը, քնքուշ ու ուսանելի են, ինչպես մայրական գուրգուրանքն ու հայրական օրհնանքը, անմահ ու զորեղ են, ինչպես Մեսրոպյան տառերը...»:

Ես փորձեցի հակիրճ ներկայացնել Հայ Առաքելական Սուրբ եկեղեցուն (չգիտեմ որքանով այն ստացվեց)՝ որպես մեր ինքնության հիմնասյուններից մեկը, ցույց տալ նրա դերը մեր բազմամյա պատմության զուգահեռներում (իհարկե, որոշակի դրվագներով), միաժամանակ հորդորել հավատարիմ մնալ հավատքին և ամրապնդել այն:

Լևոն ԱՊՈՒՔԵՆԻՍՆ Գ. Եմիշնան

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԾԱՆԻՔ

ՀԻՇՎԵԼՈՒ ԵՍ, ՄԵՐ ԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՆՆԵՐԸ



2020թ. 44-օրյա պատերազմում շատ հայրերի նման իր կյանքը հայրենիքի պաշտպանությանը զոհեց 33-ում և Եվրոպայում ճանաչված արցախցի հզոր մարզիկ, Ուժային եռամարտի 33 բազմակի չեմպիոն, Եվրոպայի առաջնությունների մրցանակակիր Թաթուլ Գարությունյանը: Գերոսի հիշատակը հավերժացնող հուշարձյուն է կառուցվել Ստեփանակերտում, որի պաշտոնական բացումը կայացավ օրերս:

Թաթուլ Վիգենի Գարությունյանը ծնվել է 1987թ. մայիսի 14-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ստեփանակերտի հ.6 դպրոցը: 2008-2013թթ. սովորել է «Մետրոպ Մաշտոց» համալսարանում և ստացել իրավաբանի մասնագիտություն: Թաթուլը ընտանիքի միակ տղա զավակն էր, հայրը մահացել էր: 2007-2012թթ. ծառայել է ԱՀ ՊԲ 307-ում: 2014թ. հուլիսից ղեկավարել էր 33 ՊՆ ենթասպաների դպրոցում: 2016թ. մասնակցել է Ապրիլյան պատերազմին: 2012-2020թթ. տարիներին ծառայել է ԱՀ ՊԲ վերանորոգման բազայում որպես պահակապետ, նյութական ապահովման վաշտի բեռնափոխման և պահպանության դասակի հրամանատար, ավագ ենթասպա: Արցախի խաղաղ բնակչության դեմ արյունալի թուր-

քաղորդեցման և ստեփանակերտում 2020թ. հոկտեմբերի 2-ին ծառայության ընթացքում ստացել է մահացու բեկորային վիրավորում՝ թիկունքում թողնելով իրենց տան գլուխի գալստյանն սպասող երեք նախադարձական զավակներին ու հղի կնոջը:

Հանգչում է Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանոցում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Թաթուլ Գարությունյանը մարզական ճանապարհն սկսել էր շուրջ տասնհինգ տարի առաջ: Սիրելով սպորտը և լինելով պարտաճանաչ ու նպատակասլաց՝ չէր նահանջում ոչ մի դժվարության առջև: Սկսել էր ուժային



եռամարտ պարապել դեռևս այն ժամանակ, երբ Արցախում այդ մարզածելը նոր էր սկսում զարգանալ: Պարապմունքների էր գնում «Ղի-նամո» մարզահամալիրում մարզիչ Արկադի Զաքարյանի մոտ: 2009թ. հիմնադրվեց Ուժային եռամարտի (փասվելով Ֆիթնես) ֆեդերացիան, իսկ Թաթուլը ֆեդերացիայի լավագույն մարզիկներից էր և մարզիչ Արկադի Զաքարյանի սիրելի սաներից մեկը: Բազմիցս մասնակցել է ՊԲ-ի կողմից կազմակերպվող մար-

զական միջոցառումների, ինչպես նաև 33-ում և արտերկրում կազմակերպվող ուժային եռամարտի առաջնությունների: Ինչպես ծառայության մեջ էր կարգապահ ու պարտաճանաչ, այնպես էլ սպորտում ցուցաբերում էր բարձր մակարդակ, կամք ու նպատակասլացություն: 33 ուժային եռամարտի բազմակի չեմպիոն, 33 ուժային եռամարտի հավաքականի անդամ էր: Թաթուլ Գարությունյանը շատ մրցանակներ ու մարզական ձեռքբերումներ ուներ: 2019թ. Եվրոպայի ուժային եռամարտի առաջնության փոխչեմպիոն էր, իսկ սեղմում պառկած դիրքից առաջնության երրորդ տեղի մրցանակակիր: Մարզական ձեռքբերումների համար 2018 և 2019 թթ. ԱՀ նախագահի կողմից արժանացել է պարգևների:

Թաթուլ Գարությունյանը շատ ընկերներ ու մեծ շրջապատ ուներ, բայց նրա համար առաջին տեղում միշտ էլ ընտանիքն էր: Անուշի հետ ամուսնացել են 2013թ. օգոստոսին: 2016-ի ապրիլին ծնվել են նրանց երկվորյակ աղջիկները՝ Աննան ու Ալինան: 2017-ին ծնվել է նրանց որդին՝ Վիգենը: 2021-ի հունվարի 28-ին ծնվեց Թամարան, որն այդպես էլ չի տեսնի թաթուլը հերոսացած հորը:

Կինը՝ Անուշ Գարությունյանը, ասում է, որ երեխաների ամուսնեղը, այդ թվում նաև Թամարայինը, հայրն էր որոշել, ինքն էլ դեմ չէր: Թաթուլը հավատարիմ ամուսին էր, հոգատար հայր՝ նվիրված ընտանիքին: Նա ամեն ինչ անում էր, որ երեխաները կարիք չունենան: Շատ ժամանակ էր տրամադրում երեխաների հետ զբաղվելուն, զբոսնելուն: Քանի որ ծանրորդները սովոր են աշխատել ծանր ու կոպիտ երկաթաձողի հետ և ունեն շատ ամուր կազմվածք, համախառն շրջապատի մոտ կարող են կոպիտ մարդու տպավորություն թողնել: Բայց դա ընդամենը տպավորություն կարող է լինել առաջին հայացքից: Թաթուլը, չնայած խիստ բնավորության տեր, բայց հավասարակշռված, նրբանկատ, խելացի ու պարկեշտ էր:

Կինը պատմում է, որ ցանկացած հարցում կարող էր օգնել իրեն, երեխաների հետ կապված ամենամուրթ հարցերում էլ գլուխ էր հանում և օգնում: Ամենազբաղված պահերին էլ հասնում էր: Անուշը հաճախ էր կրկնում, որ Թաթուլը ոնց որ իր անձնական վարորդը լինի: Այժմ նա ստիպված է առանց սիրելի ամուսնու հոգ տանել զավակների մասին:

Հուշարձյունի հանդիսավոր բացման պատիվը վստահված էր հերոսի երեխաներին: Կնոջ համար շատ դժվար է առանց սիրելի ամուսնու, նրա սրտի ցանկությունն է, որ Թաթուլը հավերժ հիշվի: «Հուշարձյունի մտահղացումը, որը կառուցվել է Ստեփանակերտի Թումանյան 123 հասցեում գտնվող շենքի բակում, պատկանում է մեր ընտանիքին: Նպատակը մեր կյանքում նրա ներկայությունն ապահովելն է, ինչպես ասում են, անշունչ առարկան շունչ է տալիս, մենք ուզում էինք, որ նրա տեղը միշտ երևա: Հուշարձյունը պատկերում է խաչ՝ հավատք, արծիվ՝ հզորություն, հավերժություն և նուր, իսկ ընդհանուր ձևը թողնվել է ժայռի տեսքով: Միջոցները մեր ընտանիքի կողմից են, միայն բարդ արժեք 1.400.000 դրամ, որը վճարել են ինքս, սակայն պատման և բարեկարգման աշխատանքները կատարվել են կետուրիս և ամուսնուս քրոջ մասնակցությամբ: Կարելի էր այն է, որ սիրուն հուշարձյունը ունենք հարազատ վայրում և մարդիկ կհիշեն Թաթուլին: Բոլորին խաղաղություն են մաղթում», - ասել է Անուշ Գարությունյանը:

Արցախյան նորոյա գոյապայքարի անմահ հերոսներից է մեր սիրելի մարզիկ Թաթուլ Գարությունյանը, որը թաթուլը հավերժացավ՝ միանալով իր մյուս զինակից ընկերներին: Մեր հերոսն ապրեց կարճ, բայց իր թափված շնորհիվ թողեց մի ամբողջ կյանքի պատմություն, որը դարձրեց կապուցման նրան: Իսկ նրա հարազատների կողմից կանգնեցված հուշարձյունը կդառնա նրա հիշատակը հավերժացնող հուշակոթող սեբունդների համար:

Ս. ԱԿԱԳՅԱՆ


ԱՐԾԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ

2020թ. 44-օրյա պատերազմի և հետպատերազմյան ծանր ժամանակաշրջանում Արցախին ու արցախցիներին օգնություն ցուցաբերելու հարցում քիչ չէր սփյուռքահայերի դերը: Հերթական հոգվածը պատմելու է Զավակաբուն գտնվող մի փոքր հայկական գյուղի՝ Խաչուտ-Աբաթխեի և նրա մերձակայքում գտնվող հայկական գյուղերի բնակիչների՝ Արցախին ցուցաբերած նյութական և բարոյական օգնության մասին:

Հանգամանքների բերումով առիթ ունեցանք լինել Վրաստանի Սամցխե-Ջավախքի մարզի Ախալցխի քաղաքից ոչ հեռու գտնվող Խաչուտ-Աբաթխե գյուղում: Ըփվելով տեղացիների հետ՝ անհնար է չնկատել հայի հայրենասիրական ոգին, հայ մնալու համար պայքարելու ու ամենատեսակով պահերին ազգի կողքին կանգնելու պատրաստակամությունը:

Մեր գրուցակիցները Խաչուտ-Աբաթխեի բնակիչներ՝ հայր և որդի Սիմոն (ծնվ. 1957թ.) ու Մանաս (ծնվ. 1981թ.) Գոգոյաններն են, որոնցից պարզաբանումներ ստացանք շատ հարցերի շուրջ: Գոգոյանների ընտանիքը, ինչպես և գյուղի գրեթե բոլոր մարդիկ, մտահոգ են Արցախի և արցախցիների ճակատագրով: Գոգոյանների ընտանիքը հատկապես սրտազավով է վերաբերվում արցախցիների անվտանգության ու երկրում կայուն խաղաղություն լինելու հարցին, քանի որ ազգակցական կապով կապված են Արցախի հետ: Սիմոն Գոգոյանի հարազատ քույրը ամուսնացած էր դարաբաղցու հետ, որի ընտանիքը բնակվում է Ստեփանակերտում:

Սիմոն Գոգոյանի հետ գրույցի ընթացքում ակնառու դարձավ նրանց նախնիների՝ երգրունահայ մի հատվածի դիմագիծը, կյանքն ու մայրաքունները, որը 1830 թվականին, ցավոք, ստիպված բռնելով իր ազգին վիճակված գաղթի ճանապարհը, Արևմտյան Հայաստանից եկել-հանգրվանել է Ախալցխի քաղաքում և նրա շրջակայքում: Այստեղ էլ նա հույսով ու հավատով նոր շենքեր է հիմնել, տուն ու տեղ դրել, նոր ընտանիքներ կազմել՝ սրբորեն պահպանելով երգրունից, Կարինից բերած իր նախնիների վարքն ու բարքը, նիստ ու



կացը, ազգային սովորույթներն ու ավանդույթները, ծեսերն ու օրենքները: Երգրունի նահանգի Թորոնի գավառում նախկինում գտնվող Խաչուտ գյուղի բնակիչները ընթացքը լեցուն է տեղահանությանը, գաղթով և նոր ապրելատեղում գոյացած բազում ծանր ու դժվարությունների խնդիրներով: Այդ բոլորով հանդերձ, ամուր պահելով ազգային ոգին, նրանք կարողացել են իրենց մեջ ուժ գտնել աշխարհին ապացուցելու՝ իրենց գոյությունը պահպանելու և հարատելու կենսունակությունը: Նրանք վերագաղթած վայրում բուռն խանդավառությամբ ձեռնամուխ են եղել բնակելի տների կառուցմանը, որոնց գուզահեռ մշակման ենթարկելով խան ու խոպան հողերը, դրանք դարձրել են իրենց կենսական միջոցների կարելու ու անհրաժեշտ աղբյուրը:

Խաչուտ-Աբաթխեի Սեփեթի բարձրավանդակի գեղատեսիլ աշխարհագրական դիրք ունեցող գյուղերից մեկն է: Նրա վեհաշուք լեռները, խորատակ ձորերն ու կիրճերը, անգուզական հովիտները, փարթած, բերքառատ և արգասաբեր դաշտերն ու կանաչազարդ մարգագետիններն իրենց անփոխարինելի գեղեցկությամբ հմայում են յուրաքանչյուրին, ում գոնե մեկ անգամ բախտ է վիճակվել լինել այս վայրերում: Գյուղում հիմնական զբաղմունքը հողագործությունն է, այգեգործությունը, անասնապահությունն ու մեղվաբուծությունը:

Ինչպես Խաչուտ-Աբաթխեի, այնպես էլ Ախալցխի քաղաքի ու նրա շրջակա մնացած գյուղերի հայ բնակչության կրոնական դավանանքը քրիստոնեությունն է, որոնց մի հատվածը հետեւելով իրենց երգրունյան նախնիներին, ավանդաբար շարունակում է դավանել քրիստոնեության հիմնական ուղղությունները:

Իրից մեկը՝ կաթոլիկությունը: Գյուղում գործում է «Սուրբ Խաչ» եկեղեցին, որում բնակիչների կողմից պարբերաբար աղոթք է հնչում առ Աստված հայ ազգի բարօրության, համերաշխության, խաղաղության համար: Բնակիչները պատմում են, որ 44-օրյա ժամանակ եկեղեցուն չէին դադարում աղոթքները Արցախի խաղաղության համար: Բնակիչներից յուրաքանչյուրն ուրախ է արցախցի տեսնելով, մոտենում՝ հարց ու փորձ են անում իրավիճակի մասին, քաջալերում ու զորակցություն են հայտնում:

Մանաս Գոգոյանը պատմում է, որ 2020թ. սեպտեմբերի 27-ին վրա հասած աղետալի պատերազմի մասին լսեցին լուրերով: Ինչպես և մեզանից շատերը, նրանք էլ մտածում էին, թե մի քանի օրվա մեջ կդադարեցվեն ռազմական գործողությունները:



Ուշի ուշով հետևում էին իրադարձություններին: Սակայն պատերազմը դադարեցվելու մասին լուրն ուշանում էր: Շուտով հավաքվեցին իրենց գյուղի և հարակից գյուղերի հայրենասեր տղամարդիկ ու երիտասարդները և հանձն առան իրագործել Արցախին օգնելու իրենց ծրագիրը: Որոշ երիտասարդներ Ախալցխայի և Ախաբալաքի շրջաններից մեկնել են Արցախ և մասնակցել մարտական գործողություններին կամ օգնել թիկունքում որպես կամավորներ: Իսկ մեծ մասը կցվել էին գունդեր, մեթոք ու դեղորայք հավաքելու և Արցախ ուղարկելու գործին: Խաչուտցիները և մերձակա հինգ գյուղերի բնակիչներն օգնում էին, ով ինչով կարող էր՝ սկսած բանջարեղեն-մրգեղենից, պահածո ու մուրաբայից, հագուստ, գունդեր ու ավտոմեքենայից: Հատկապես ուշագրավ է մերձակա Զուլա գյուղի բնակիչ Սերուժան Պապիկյանի բարեգործա-

կան արարքը: Մանաս Գոգոյանը պատմում է, որ լսելով, թե Արցախում ավելանում է վիրավորների թիվը, շտապ օգնության մեքենաները չեն հերիքում, որոշեցին համապատասխան տրանսպորտի միջոց ձեռք բերել ու ուղարկել Արցախ: Սերուժան Պապիկյանն «YA3-452» մակնիշի ավտոմեքենա ուներ: Նրան են մոտենում երիտասարդներ և առաջարկում են գնել ավտոմեքենան: Հարցնում է, թե ինչի համար են ուզում գնել մեքենան, պատասխանում են, որ Ղարաբաղ ուղարկելու: «Եթե այդպես է, չեն վաճառում, տալիս են», - պատասխանում է Սերուժանը ու հետո էլ գումար է տալիս, որ նոր անվարողներ գնեն ու փոխեն, հետո տանեն:

Համավարակով պայմանավորված՝ սահմանափակումների պատճառով տղաները դժվարության հանդիպեցին Վրաստան-Հայաստան անցակետում: Չէր կարելի ազատ երթևեկել, մեթոք ու դեղորայք տեղափոխել, այն էլ՝ մեծածավալ: Մինչդեռ ջավախքահայերի կամքն անհրաժեշտ չէր: Ժողովուրդը ոտքի էլավ ու կանգնեց անցակետում՝ արտահայտելով մարդասիրական օգնություն Արցախ ուղարկելու անհրաժեշտությունը և իրենց ամսասան կամքը: Որոշակի դիմադրություն ցուցաբերելուց հետո երկարատե բանակցությունների արդյունքում այնուամենայնիվ, հոկտեմբերի սկզբին հաջողվեց 25 տոննա մարդասիրական օգնություն, ավտոմեքենաներ և 20 000 վրացական լարիի համարժեք գումար տանել Արցախի մարզի փուլով: Ինչպես ասում է Մանաս Գոգոյանը, դա դեռ առաջին փուլն էր, իսկ երկրորդ փուլով հնարավոր եղավ ավելի շատ ուղարկել:

Եղեռնի բովով թրժված ջավախքահայերի հայրենասիրական ոգին ու ազգին օգուտ տալու կամքն անասան է: Ծակատագրական պահերին համախմբվելու, ազգին նեցուկ կանգնելու պատրաստակամություն ունեցող ջավախքահայերն Արցախի հետ են և կամենում են Արցախը տեսնել ամբողջական, ազատ ու Մայր Հայաստանին միացած:

Սոնյա ԱԿԱԳՅԱՆ

ԱՐԺԵՆԱՍԱԿԱՐԳ

ԴՊՐՈՑԸ, ԱՐԺԵՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱՏԵՍԱԿ «ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»



Երեխաների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բուրբ կարեւորում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձեւակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Արժեքը երեւոյթ է մեր կյանքում, որի դիմաց մենք զին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվյալսանքներ, հույզեր,

այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար. դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլեւ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տա-

րածքներում:

Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Չարագած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:

Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման:

Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի միմյանցի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատում են էթիկական նոր-

մեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար. նա պետք է զգա եւ ցավ, եւ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

Արամ ՓԱԽՉԱՆՅԱՆ
«Այբ» դպրոցի տնօրեն,
եւ ABBYY ընկերության
փոխնախագահ

ԱՐՃԱԽՅԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԳՈՒԳԱՐԱՆՆԻ ԹԵՄԻ «ԾԻԾԵՆԱԿ» ՃԱՄԲԱՐՈՒՄ

Օգոստոսի 8-15-ը Արցախի թեմի կիրակնօրյա դպրոցների 100 աշակերտ թեմի առաջնորդ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի նախաձեռնությամբ և օրհնությամբ իրենց ամառային հանգիստն անցկացրին Գուգարաց թեմի «Ծիծեռնակ» ճամբարում: Վաղ առավոտյան օրհնությամբ, աղոթքով, խրատներով ու բարեմաղթանքներով սրբազան հայրը ճամբար ճանապարհեց երեխաներին:

Ճամբարականների առօրյան շատ հագեցած, հետաքրքիր և ուսուցողական էր կազմակերպված: Օրն սկսվում և ավարտվում էր աղոթքով, օրվա ընթացքում կազմակերպվում էին հոգևոր թեմաներով դասեր, երաժշտական, սպորտային, թատերական, զեղարվեստական, ժամանցային, արկածային խաղեր և միջոցառումներ: Երեխաները մեծ սիրով սովորեցին ազգային երգեր ու պարեր:

Քանի որ հերթափոխի ճամբարականները հիմնականում Արցախի մանուկներն էին, ճամբարում բարձրացվեց նաև Արցախի դրոշմը, առավոտյան և երեկոյան տողաներին ՀՀ պետական և «Ծիծեռնակ» ճամբարի դրոշմերի հետ հրապարակ էր դուրս բերվում նաև Արցախի Հանրապետության պետական դրոշմը, իսկ նվազախումբը նվազում էր նաև Արցախի օրհներգը: Ճամբարական երեխաներին ուղեկցում էին թեմի կիրակնօրյա դպրոցների յոթ ուսուցիչներ:

Ճամբարականները պատարագի մասնակցեցին ճամբարի տարածքում գտնվող «Արբոց մանկանց» մատուռում: Պատարագը



բազան հայրը, որը մշտական կապի մեջ էր ճամբարի պատասխանատուների հետ: Ամեն օր ճամբար էր այցելում նաև Գուգարաց թեմի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոս Հակոբյանը, իր օրհնությունը տալիս ճամբարականներին և իր անմիջական հոգածությամբ շրջապատում բոլորին:

Ճամբարի ողջ պատասխանատու անձնակազմը առանձնահատուկ հո-



գատությամբ ու ջերմությամբ էր վերաբերվում արցախցի մանուկներին:

Ճամբարական օրերն անցկատ ու շատ արագ անցան: Վերջին օրը ճամբարականները մասնակցեցին համդիսավոր տողանին, ստացան օրհնագրեր, երգարաններ և խմբանկարներ, իսկ ոմանք նաև պարզապես վեցին պատվոգրերով: Երեկոյան կազմակերպվեց խարույկ: Հաջորդ առավոտյան ճամբարականները դժվարությամբ հրաժեշտ տվեցին արդեն հարազատ դարձած ջոկատավարներին ու նրանց օգնականներին և հոգեպես ավելի հարստացած ուղևորվեցին դեպի հայրենի օջախներ՝ իրենց հետ տանելով ջերմ հուշեր ու զգացողություններ: Երեխաներին վերադարձին նույնպես դիմավորեց սրբազան հայրը՝ թեմի քահանա հայրերի հետ միասին:

Արցախի թեմի կիրակնօրյա դպրոցների ուսուցիչները, ճամբարին մասնակից երեխաներն ու նրանց ծնողներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում Արցախի թեմի առաջնորդ սրբազան հորը՝ երեխաների հանդեպ ցուցաբերած հոգատար ու հայրական վերաբերմունքի համար, ճամբարի ողջ անձնակազմին՝ այսքան կարճ ժամանակում իրենց ջերմ ու հոգատար վերաբերմունքով ճամբարականների մեջ հարազատության զգացում առաջացնելու և ճամբարը սիրելի դարձնելու համար:

Ճամբար գնալու և վերադառնալու ամբողջ ճանապարհին երեխաների ավտոբուսների շարասյանն ուղեկցում էր պետավտոտեսչությունը, ինչի համար ծնողները և ուսուցիչները շնորհակալություն են հայտնում ԱՀ ներքին գործերի նախարար պարոն Կարեն Սարգսյանին՝ երեխաների ուղևորությունն ապահով և անվտանգ կազմակերպելու համար:

Արթուր կարկ ԱԲՐԱՄՅԱՆ
Արցախի թեմի ԶԲԿ տնօրենի
փոխնախագահ, Սուրբ Հակոբ
եկեղեցու կիրակնօրյա դպրոցի
ուսուցիչ

մատուցեց ճամբարի հոգևոր պատասխանատու տեր Վահան քահանա Ազարյանը: Մեր երեխաների՝ ճամբարում գտնվելու ժամանակահատվածը համընկավ Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի հետ և ճամբարում տոնի օրը կատարվեց նաև խաղողօրհնության արարողություն, բոլորն էլ ճաշակեցին օրհնված խաղող:

Ամեն օր ճամբարականների առօրյայով և որպիսությամբ հետաքրքրվում էր սր-



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐ

Երկու նոր գիրք

ՀԱՅՐԵՆԻՔԸ, ԼՈՒԻԹՅԱՆ ԺԱՍՆԱԿԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ...

Արմատներով արցախցի երիտասարդ գրող, սցենարիստ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի կառավարման խորհրդի անդամ, թատրոնի և կինոյի տեսաբան Վովա Արզումանյանի «Երեմակ կարոտ», «Խաղաղությունն ու ես», «Բանակի տղան», «Չետոյարծից առաջ» գրքերի շղթային միացավ «Ճաքած պատերի լուսանցքից» ժողովածուն: «Ճաքած պատերի լուսանցքից» գրքում տեղ գտած ստեղծագործություններում հեղինակն է, ընկերները, Արցախը, Հայաստանը, հող հայրենիի արժեքն իմացող հայր... և սա կենսագրություն է՝ հայրենիքից դեպի սեր ծովող, բոլորիս ցավի, ապրումների ու սպասումի: Սպասում, որը չի ծերանում...:



լով, որ Վովա Արզումանյանի արձակը նույնքան ինքնատիպ է, որքան պոետիկ:

Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, կինոգետ, գրող Դավիթ Մուրադյանի խոսքով էլ՝ ուրախալի է, որ երիտասարդ գրողի գիրքը հարյուրավոր, ինչու ոչ՝ հազարավոր ընթերցողներ ունի և ունենալու է: «Այսպիսի բարդ, հակասական ժամանակներում, երբ կարծես գիրքը, գրականությունը, բանաստեղծությունը պիտի «համեստորեն նահանջեն» և սպասեն իրենց ժամին, այս դեպքում չի սպասել, այլ համարձակություն է ունեցել կրկին ներկայանալ ընթերցողին», - նշում է Դավիթ Մուրադյանը՝ հեղինակի արձակը բնորոշելով հետաքրքիր պոետական ուրվապատկերների գրականություն:


Հայաստանի գրողների միության անդամ, բանաստեղծուհի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գի-

տաշխատող Գոհար Գալստյանի խոսքով՝ հրաշալի գրքի հետ գործ ունենք: Գոհար Գալստյանը նշեց, որ ռիթմով, թեմաների շարունակականությամբ Վովա Արզումանյանը որքան զգայուն արձակագիր է, նույնչափ էլ պոետիկ մեջ զգայուն է: «Գրքի հիմնական բաղադրիչը կարոտն է՝ մանկության տնից մինչև աղոթատուն, երկրից մինչև երկինք», - նշում է Գոհար Գալստյանը:

Գրքի հեղինակ Վովա Արզումանյանի խոսքով՝ մեզանում այսօր պակասել է լիարժեք ապրելու գույնը. «Թերևս ասածս մի քիչ տարօրինակ թվա, բայց մենք այսօր մի տեսակ քիչ ենք ապրում, վստահ

ծությունների մեջ ապրել է իր զգացածը: «Յուրաքանչյուր տող մի հայելի է, որ ինձ անընդհատ որոնումների մեջ է պահում՝ նորն ու ազդեցիկը գտնելու, կյանքին մի քանի կողմից նայելու եւ մարդկանց ներսը ճանաչելու համար: Կասեմ մի բան՝ իմ նախորդ գրքերի շարունակությունն է «Ճաքած պատերի լուսանցքից» ժողովածուն, որտեղ ոչ մի խոսք օդում չէ եւ ուզում է ընթերցողի հետ վերապրել եւ նոր ճանապարհի հարթել,- ասում է նա՝ շարունակելով,- հաճախ եմ մտածում՝ ե՞րբ և որտեղի՞ց սկսվեց ամեն ինչ... արդյոք ես գիտե՞մ իմ հարցի պատասխանը: Երկի՞ ոչ, պատասխանողը ժամանակն է... Երբեք չեմ փորձել գրել այնպիսի բաների մասին, որոնք մեծ կամ փոքր են ինձանից, հեռու կամ շատ մոտ են... Երբ երկիրը քո գրկում է, դու՛ր երկիրդ, ու երբ ընկերդ դառնում է քարե երջանկություն, եղբայրդ՝ լույս, վանքդ ավերում են աչքիդ առաջ, մնում է միայն մի բան՝ մտածել, մտածել, մտածել...»:


«Ճաքած պատերի լուսանցքից» գրքի «Պոետիկա» բաժնի մի մասը լույս է տեսել անգլերեն թարգմանությամբ առանձին գրքով՝ «խաբրված թռիչք» («Scribbled gliding») վերնագրով, որն արդեն մի քանի ամիս է, վաճառվում է արտերկրում: Գրքի թարգմանիչը Քրիստինե Օհանյանն է:



չենք ապրում, որովհետև չգիտենք՝ վաղը ինչ կլինի: Պատերազմից հետո ինչքան էլ գույները վերականգնվեն, մեկ է, բացը կզգացվի, որովհետև համուն հայրենիքի անմահացած մեր եղբայրներն ու հայրերն են երկրի գույնը: Մեզ համար չափազանց շատ է կարմիրը»: Հեղինակն ասում է, որ «Ճաքած պատերի լուսանցքից» գրքում տեղ գտած ստեղծագոր-

ծությունները մեջ ապրել է իր զգացածը: «Յուրաքանչյուր տող մի հայելի է, որ ինձ անընդհատ որոնումների մեջ է պահում՝ նորն ու ազդեցիկը գտնելու, կյանքին մի քանի կողմից նայելու եւ մարդկանց ներսը ճանաչելու համար: Կասեմ մի բան՝ իմ նախորդ գրքերի շարունակությունն է «Ճաքած պատերի լուսանցքից» ժողովածուն, որտեղ ոչ մի խոսք օդում չէ եւ ուզում է ընթերցողի հետ վերապրել եւ նոր ճանապարհի հարթել,- ասում է նա՝ շարունակելով,- հաճախ եմ մտածում՝ ե՞րբ և որտեղի՞ց սկսվեց ամեն ինչ... արդյոք ես գիտե՞մ իմ հարցի պատասխանը: Երկի՞ ոչ, պատասխանողը ժամանակն է... Երբեք չեմ փորձել գրել այնպիսի բաների մասին, որոնք մեծ կամ փոքր են ինձանից, հեռու կամ շատ մոտ են... Երբ երկիրը քո գրկում է, դու՛ր երկիրդ, ու երբ ընկերդ դառնում է քարե երջանկություն, եղբայրդ՝ լույս, վանքդ ավերում են աչքիդ առաջ, մնում է միայն մի բան՝ մտածել, մտածել, մտածել...»:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՐԱՏԻՊ ԳԻՐԷ



Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի երաշխավորությամբ լույս է տեսել Վովա Արզումանյանի «Բառը շարժման մեջ» գրախոսականների ժողովածուն: Ժողովածուում տեղ են գտել «Գրական թերթ»-ում, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության «Սիրոն» ամսագրում, «Առավոտ» օրաթերթում, «Գրեթերթ»-ում, «Լուսարար» և «Ստեփանակերտ» թերթերում տպագրված գրախոսականներ: Գիրքը հասցեագրված է ոչ միայն ուսանողներին, այլև ժամանակակից գրականությամբ հետաքրքր-

վողներին: Գրքի խմբագիրը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արցախի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանը, համոզված է, որ գեղարվեստական բարձրարվեստ գրականության հարստացումը մեծապես նպաստում է գրականագիտության զարգացմանը և ընդհակառակը: «Ծանոթանալով երիտասարդ գրաքննադատ Վովա Արզումանյանի գրախոսություններին՝ երկչերտ գոհունակություն ու հպարտություն ապրեցի այն առումով, որ հանձին

երիտասարդ գրական գործիչ, համոզվեցի, որ հայոց գրականագիտության նոր հորիզոններում հառնում է նման գրաքննադատ», - նշել է Սոկրատ Խանյանը, ապա ավելացրել, որ գրախոսությունների սույն շարքը եկավ ապացուցելու, որ իրականում է Մեծն Ավետիք Իսահակյանի՝ 1946 թվականին արտահայտած խորհուրդն այն մասին, որ հայ գրականության ստեղծման սահմաններն ընդգրկում են մայր Հայաստանը, ներքին և արտաքին Սփյուռքը՝ հավատարիմ «Մեկ ժողովուրդ՝ մեկ գրականություն» հասկացությանը:

Վովա Արզումանյանը, լինելով ժամանակակից գրականության ջատագով, լավագույնս է տիրապետում գրական դաշտի և՛ խնդիրներին, և՛ բացթողնումներին, և՛ առավելություններին: Վստահ է՝ լեզուն, մշակույթը, գրականությունն ազգային դիմագիծը ճիշտ ձևավորելու և պահպանելու կարևորագույն հիմքերից են, և պետք է ամեն գնով այն արժևորել: «Փորձել եմ անդրադառնալ այնպիսի գրողների ստեղծագործությունների, որոնք նոր խոսք են բերում մեր գրականություն և փորձում դրանով մարդկային հոգու

խորքերը ներթափանցել», - նշել է Վովա Արզումանյանը՝ ավելացնելով, որ այսօր բարձրարժեք գրականություն կարողալը կարևոր է, վերլուծելն ու եզրակացություններ անելը՝ ցանկալի:

«Բառը շարժման մեջ» գրքում նաև քիչ ուսումնասիրված մի կարևոր ուղղության է անդրադարձել հեղինակը՝ «աբսուրդի դրամայի դրսևորումները հայ արդի գրականության մեջ»: Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Արվեստի պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր, դրամատուրգ, գրող Դավիթ Մուրադյանն է վստահեցնում՝ Վովա Արզումանյանին հաջողվել է ի մի բերել աբսուրդի ժանրային բնութագիրը կրող մի քանի պիեսներ, որոնք ասպարեզ են եկել հիմնականում նախորդ դարի վերջերից և ավելի նկատելի դարձել 2000-ականներին: «Հողվածը պատկերացում է տալիս այդ գեղարվեստական պրոցեսի և կոնկրետ ստեղծագործությունների մասին», - նշել է Դավիթ Մուրադյանը:

Հեղինակը նաև անմասն չի մնացել և ներկայացրել է երիտասարդ սերնդի մի խումբ ստեղծագործողների ստեղծագործությունների թե-

մատիկ և կառուցվածքային դրսևորումները, դրանց գեղագիտական արժեքի ընդհանրացումներով ի ցույց է դրել ընդհանուր համապատկերը: Վովա Արզումանյանը վստահ է՝ ինչպես արձակը, այնպես էլ պոետիկ ինքնատիպ բնավորություն են պահանջում: «Սակայն ցավալի է, որ այսօր մենք ականատես ենք մի իրականության, որտեղ մակերեսային պատկերացումները գերազանցում են խորը ընկալման բարդ գործին», - նկատում է նա:

Հ. Գ. «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի, Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում իրականացվեց երիտասարդական գրականագիտական մրցույթ, որի ժամանակ Վովա Արզումանյանի գրաքննադատական հոդվածն արժանացել է առաջին մրցանակի:

Նյութերը՝ Աղունիկ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ

ՏԱՂԱԿԱՐ ՏՈՆ

ԽԱՉԿԵՐԱՑ



Կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներին համար՝ Աստծո գործություն: (Ա Կորնթ. 1:18)

Ակած առաքելական ժամանակներից Քրիստոսի խաչը՝ որպես հարգանքի և երկրպագության առարկա, կարևոր տեղ է գրավում քրիստոնեական բոլոր եկեղեցիների պաշտամունքում: Հայ եկեղեցին նույնպես ունի խաչին նվիրված տոներ, որոնցից մեկը՝ խաչվերացը, Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է և տոնվում է ամեն տարվա սեպտեմբերի 14-ին մոտ կիրակի օրը: Այս տարի այն տոնվում է սեպտեմբերի 11-ին: Տոնը հաստատվել է խաչի՝ գերությունից դեպի Երուսաղեմ վերադարձի պատմական դեպքը պանծացնելու և խաչի գործությունը գովերգելու համար: Ինչպես ընդունված է Հայոց եկեղեցում, տոնի հաջորդ երկուշաբթի օրը մեծցեյակների հիշատակության օր է:

ՏՈՆԻ ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Տոնը սահմանվել է 335թ.՝ Երուսաղեմի Ս. Հարության տաճարի նավակատիցի հաջորդ օրը, ի փառս Տիրոջ գտնված կենարար խաչափայտի: Ի տես բոլոր հավատացյալների՝ խաչափայտը հանդիսավոր կերպով վեր բարձրացվեց (այստեղից էլ տոնի անունը՝ խաչվերաց, այսինքն՝ խաչի վեր բարձրացում) և դրվեց Գողգոթայի խորանում:

Հետագայում այս տոնի հետ սերտորեն կապվեց 610թ. պարսից խոսրով թագավորի կողմից գերեվարված խաչափայտը 628-ին Հերակլ կայսեր Երուսաղեմ վերադարձնելու և կրկին Գողգոթայում բարձրացնելու հիշատակությունը:

610 թվականին Պարսկաստանի խոսրով թագավորը, կամենալով իրեն հպատակեցնել Բյուզանդիայի Հերակլ կայսերը, հարձակվում է Բյուզանդիայի վրա: Պարսկական զորքերը՝ խոռեմ զորավարի զխավորությամբ, հաղթանակ են տանում և 614թ. մտնում են Երուսաղեմ: Երբ պարսից զորքը մտավ քաղաք, սրի քաշեց ողջ բնակչությանը: Կոտորվեց 57000 և գերի վերցվեց 35000 մարդ: Գերեվարվեց նաև Չաբարի հայրապետը՝ բազմաթիվ քահանաների հետ: Ապա պարսիկները մտան սուրբ Հարության տաճարը, բռնագրավեցին Աստվածընկալ սուրբ խաչը և տաճարի ոսկյա ու արծաթյա սպաքեքերը: Չորավարը պատվական խաչը տարավ Պարսկաստան: Երբ զորքը մոտենում էր թագավորանիստ քաղաքին, խոսրով թագավորն ընդառաջ ելավ՝ դիմավորելու Տերունական խաչին, որից Քրիստոս

սի խաչն ակամա փառավորվեց: Երբ Քրիստոսի խաչն այդպիսի պատվով մտավ քաղաք, պարսից թագավորն այն մեծ պատվով պահեց իր գանձարանում և խաչի առջև մի անշեջ կանթեղ էր մշտապես պահում:

Քրիստոնյաները, գրկվելով իրենց սրբությունից, հայտնվեցին այնպիսի անմխիթար վիճակում, ինչպես ժամանակին հայտնվել էին հրեաները, երբ փղշտացիները գերեվարել էին Աստծու Ուխտի տապանակը: Ասկայն Տիրոջ խաչը, հայտնվելով Պարսկաստանում, մեծ փառքի արժանացավ, ինչպես և Տապանակն Ազոտոսում (տես Ա թագ. 5): Տեղաբնակները Տիրոջ խաչին վերաբերվում էին մեծ երկյուղածությամբ և ասում, որ քրիստոնյաների Աստվածն է իրենց մոտ եկել: Դրանից նրանց սրտերն այնպիսի ահով էին տոգորվում, որ հեթանոս լինելով հանդերձ՝ չէին համարձակվում վնասել խաչափայտը և նույնիսկ չէին դիպչում նրան: Շատերն էլ այդ ահից դիմում էին տեղաբնակ քրիստոնյաներին և նրանցից լսելով Ավետարանի խոսքը, քրիստոնեություն ընդունում:

Այնուհետև Հերակլ կայսրը խաչափայտը վերադարձնելու համար պատերազմի դուրս եկավ խոսրով արքայի դեմ: Հայերը նույնպես անմասն չմնացին Տիրոջ խաչափայտը վերադարձնելու գործում: Կայսերն իր ռազմական օժանդակությունն էր բերում նաև հայկական կողմը՝ զորավար Մծեծ Գնունու զխավորությամբ, որին միացան նաև պարսկահպատակ հայերը: Ասկայն Հերակլ կայսրը մեծ պարտություն կրեց: Այդ պարտությունից հետո նա քուրճ հագավ, հանեց իր թագն ու թագավորական ծիրանին և մոխրի վրա ընկնելով՝ երեք օր շարունակ աղոթեց՝ խնդրելով Մարիամ Աստվածածնի բարեխոսությունը: Չորրորդ օրը նա ստացավ աղոթքի պտուղը. տեսիլքով նրան հայտնվեց, որ պետք է հաղթի այդ պատերազմում: Եվ իսկապես, ճակատամարտում Հերակլը հաղթեց, խոսրովը սպանվեց, իսկ նրա բանակի մնացորդը փախավ: Հերակլ կայսրը վերցնում է խաչը և հանդիսավոր թափորով տեղափոխում Կոստանդնուպոլիս, այնուհետև՝ Երուսաղեմ:

Գերեզարծության ճանապարհին խաչը գրեթե ամեն տեղ բարձրացվում է և ամենուր ցնծություն առաջացնում, որը կարծես վերապրումն էր Քրիստոսի հարության: Այդ դեպքերն էլ պատճառ դարձան «խաչվերացի» տոնի հաստատման համար:

Խաչի թափորի ճանապարհն անցնում էր հայոց Կարին քաղաքով, և խաչափայտը ժամանակավորապես հանգրվանեց Կարինում: Տեղական ավանդությունը պատմում է, որ խաչը հանձնելուց հետո պարսիկները կրկին փորձում են այն ետ վերցնել և այդ նպատակով հարձակվում են, երբ խաչը Կարինում էր գտնվում: Հայերը, խաչափայտն այնտեղ թողնելով, ետ են մղում պարսկական կողմի հարձակումը և երբ վերադառնում են խաչափայտը վերցնելու, տեսնում են, որ խաչի դրված տեղից վճիտ աղբյուր է բխում: Կարմո դաշտի հարավարևելյան կողմում բարձրացող լեռների մեծ գագաթը խաչափայտ է կոչվում, իսկ լեռների ստորոտում կա խաչկա վանքը, ուր խաչվերացի սքանչելի տոնի առիթով ժամանակին բազում ուխտավորներ էին այցելում:

Կայսրը խաչափայտը սրբությամբ 3 տարի Կոստանդնուպոլսում պահելուց հետո այն անձամբ Երուսաղեմ է տանում և իր ուսի վրա դրած Գողգոթայի գագաթը հանելով՝ բարձրացնում է Սուրբ Հարության վերանորոգված տաճարում՝ ի տես բոլոր քրիստոնյաների: Այդ ժամանակից էլ վերջնականորեն հաստատվում և մեծ հանդիսավորությամբ տոնվում է խաչի բարձրացման հիշատակը՝ խաչվերացը:

ՏՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Խաչվերաց» բառը նշանակում է խաչի բարձրացում, կանգնեցում: Խաչվերացի տոնն ունի Քրիստոսի եկեղեցու անպարտելիության խորհուրդը, եկեղեցի, որի՝ երկրի վրա կապածը կապած, իսկ արձակածը արձակած պիտի լինի երկնքում (Մատթ.18:18): Խաչվերացի տոնը կատարվում է մեծ հանդեսով: Երեկոյան մի ափսեի վրա բազմեցնում են Կենաց փայտի մասունք պարունակող խաչը, այն զարդարում ռեհանով ու բազմերանգ ծաղիկներով և վրան վարդաջուր ցողում: Ապա խաչը թափորով բերում են եկեղեցու զավիթ և դրանով տյառնագրում ու օրհնում աշխարհի չորս կողմերը:

Այսօր, այս խառը աշխարհաբաղաքական իրադրությունում ամենքս կարիք ունենք Տիրոջ խաչը մեր ներսում վեր բարձրացնելու, խաչի գործությամբ նախ ինքներս մեզ, ապա աշխարհին հաղթելու: Խնդրենք, որ Տերը իր Աստվածային Նշանով՝ տիեզերքի փրկագործ ու աշխարհակեցուցիչ խաչով, որ ցուլացած բարձրացավ սուրբ Գողգոթայի վրա, օրհնի ու պահպանի Հայոց Արցախ և Հայաստան հանրապետությունները, հայ ազգիս կրկին վերելքներ ու հաղթանակներ շնորհի՜ ի փառս Աստծո և ի շահ մեր հայրենիքի:



Աղոթք խաչի ապավինության
Երբ լուսավոր ամպերի վրա երևա Չոր փառքով, Քո խաչը մեզ ապավեն թող լինի, Տեր Հիսուս: Այն ժամանակ մենք՝ Քեզ ապավինածներս, չենք ամաչի, այլ Քո մեծ գործությամբ, որպես լույսի որդիներ, կբերկրենք Քո աջ կողմում:
(Ժամագիրք)


Չօրութիւն սուրբ խաչի Քո, Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի, սա պահեստը զմեզ յամենայն փորձութեն:

Քանզի ի սմա բարձրացար, Աստուած, եւ ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ, սա պահեստը զմեզ յամենայն փորձութեն:

Եւ զՔո միւսանցան զգալուսող նշանաւ խաչի Քո ցուցեր աշխարհի. սա պահեստը զմեզ յամենայն փորձութեն:

(Շարական)

ԳՈՒՐԳԵՆ ԲԱՂԱՍԱՐՅԱՆԻ ԱՐԽԻՎԻՑ



Արցախցի անվանի լեզվաբան, բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Գուրգեն ԲԱՂԱՍԱՐՅԱՆԸ երկար տարիներ դասախոսել է Արցախի պետական համալսարանում, եղել է, բանասիրական ֆակուլտետի դեկան (1982-1988), ստեղծել է «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան»՝ երկու հատորով: Առաջին հատորն ընդգրկում է Ա-Կ բառաչափը, իսկ երկրորդը՝ Դ-Օ:

Գ. Բաղդասարյանն իր բառարան-հանրագիտարանի երկհատորյա գրքերով հետաքրքիր, նոր էջ ավելացրեց հայ բարբառագիտությանը: Նրա աշխատության մեջ տեղ են գտել ոչ միայն Արցախի բարբառում գործածվող բառերն ու բառակապակցությունները, այլև օրհնանքները, բարենաղթանքները, անեծքները, առածները, հանելուկները, ժողովրդական ծիսակատարությունները, խաղերը, կերակրատեսակները, որոնք նկարագրվում են մանրամասնորեն: Վաստակաշատ լեզվաբանն աշխատում էր բառարան-հանրագիտարանի 3-րդ գրքի վրա: Ասկայն նա չհասցրեց ավարտել այդ կարևոր գործը՝ մահկանացուն կնքելով 2012թ. փետրվարի 18-ին: Հավանաբար զգալով իր մոտալուտ վախճանը՝ Գ. Բաղդասարյանը ցանկություն էր հայտնել մինչև գրքի տեսքով իր աշխատությունը տպագրվելը, այն հատվածաբար լույս տեսնի «Լուսարար»-ում, ինչն էլ սիրով հանձն առանք: Ամտիպ գրքի «Արցախցին՝ բառաստեղծ» բաժնից հատվածաբար լույս տեսավ «Լուսարար»-ի 2012թ. 3-4, 5-6, 7-8 համարներում, սակայն Գ. Բաղդասարյանի մահից հետո դադարեցրինք տպագրությունը: Վերջերս փորձելով «Լուսարար»-ի արխիվը՝ հանդիպեցինք լեզվաբանի թղթերին, որոնք նա պահ էր սովել «Լուսարար»-ին՝ ասելով, որ իր անտիպները տպագրվելու հարցով ոչ մեկը չի հետաքրքրվելու, վստահում է միայն մեզ՝ «Լուսարար»-ին: Թեկուզ ուշացումով, բայց ոչ ուշացած՝ «Լուսարար»-ը նորից ծնունդ կունենա Գ. Բաղդասարյանի անտիպ գրքի տպագրությունը՝ սկսելով վերատպված հատվածներից և հասցնելով դրանք մինչև վերջ՝ մեր ձեռքի տակ եղած անտիպները: Կծգտեմք այն տպագրել նաև գրքի տեսքով: Սա կլինի արդարացի որոշում և հարգանքի տուրք մեր անվանի լեզվաբանի հիշատակին:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Լուսարար» թերթի խմբագիր

ԱՐՃԱՆՑԻՆ՝ ԲԱՌԱՍՏԵՂԾ

Դարերի ընթացքում Արցախի բարբառի բառապաշարը հարստացել է ինչպես փոխառյալ, այնպես էլ արցախցու ստեղծած բառերով: Ներկայացնում ենք նախ արցախցու ստեղծած բառերն ու բառակապակցությունները: Դրանք ձևով, հնչյունական կազմով տարբերվում են և՛ փոխառություններից, և՛ գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից հայերենի բառերից: Դրանք են.

- ԱնՏԱ -1.Կորիզահան հոն, սալոր: 2.Ամուլ տղամարդ:
- ԱճԻ - 1..Մայրիկ: 2.Չամուսնացած, տանը մնացած աղջիկ: 3.Կանանց դիմելու կոչական բառ:
- ԱՆԱԽԱԹՈՒՆ - Խխուց
- ԱՆԸԸԸ - Բոլորովին, ամենկին:
- ԱՌԵՆ - Չեռքին, մոտը:
- ԱՌԵՍ - Չեռքիս, մոտս:
- ԱՌԵՏ - Չեռքիդ, մոտդ:
- ԱՌՆԸ - Թռռան թռռը, ծոռոռդի:
- ԱՌՌԵ -1.Հեցն: 2.Բոլորովին, լրիվ: 3.Ի հեծուկս, ջգրու:
- ԱՍԿԵՔ - Դարբնի երկար ունելի, որով բռնում են շիկացած երկաթը:
- ԱՎՐԱՂ - Փտած, անպետք:
- ԱՏԱԿ - Դժոխք:
- ԱՐԱ -1.Տղամարդուն դիմելու կոչական բառ: 2.Առնչություն, հարաբերություն: 3.Տրամադրություն:
- ԱՐԱԿ ՓՈՆԵԼ - Տրամադրության բարձր պահը որսալ:
- ԱՐԱԿՈՒՄԸ ԻՆԻԼ - Տրամադրված լինել:
- ԱՐՄԱՍԿ - Չարմանք:
- ԱՐՑ - 1.Գուլպայի գործվածքի սկիզբը: 2.Չամբյուղի, կողովի բոլորակ ամուր հյուսվածքը:
- ԲԻՉԼԻԳՅ - Սրածայր:
- ԳՈԳՈԼ - Գլուխ:
- ԳՈԴԱԼ - 1.Կարճահասակ: 2.Պոչատ:
- ԳՅՈՄՓՈՒԼ - Մեծ մուրճ:
- ԴՈՒ - Կիսաեփ լոբի, սիսեռ և այլն:
- ԵՇՆԸ - Բորբոս:
- ԵՇՆԻԼ - Բորբոսնել:
- ՉԱԽՈՏ - Արտաքնոց, զուգարան:
- ՉՈՒՉԻ - Փողային գործիքին նվազակցող:
- ԵԼՀԱ - Դարձյալ, նորից, կրկին:
- ԸԺՄԱԺԵՆՔՅ - Իրիկնաղեն:
- ԸԼՈՈՆԵՅԳ -Թարախապալար:
- ԸՄԲՈ - Չարմանքի բացականություն:
- ԸՆԴԵՏԱՆԸ - Դրանից հետ, այնուհետև:
- ԸՆԴԵՏԱՆԸՍ - Այսուհետև, սրանից հետո:
- ԸՈԸԿՅՈՒՆԻ - Իրականում, արթմնի:
- ԸՈԸՈՒ - Ամտեր, բոլորին մատչելի:

(Շարունակելի)

ՇՆՏԱՔՐԵՐԱՆՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԽԵԼԱՅԻ ՄԱՐԴԻԿ

«Աշխարհում ամենա-ամենա» վերնագրի ցանկացած ընտրություն սուբյեկտիվ է: Սակայն կան որոշ և օբյեկտիվ չափանիշներ, որոնցով մենք կարող ենք կազմել այդպիսի ցուցակներ:

Օրինակ՝ ինչպե՞ս որոշել պատմության ամենախելացի մարդուն: Յուրաքանչյուր «խելացի մարդ» հասկացության տակ ակնարկվում է ինչ-որ մի բան: Որպես օրինակ բերենք խելացի մարդու մի քանի սահմանում:

1. Ամենախելացի մարդը նա է, ով գիտի բոլորից շատ, այսինքն՝ ամենագրագետն է (երուդիտ):

2. Խելացի մարդը նա է, ով ունի չափազանց խոր մտածելու ունակություն, կարող է քափանցել երևույթի խորքերը:


3. Ամենախելացի մարդը նա է, ով շատ գիտի և ունի զարգացած մտավոր ընդունակություններ (ինֆորմացիայի որոնում, հավաքում և վերլուծություն):

Ազնվորեն ասելով, մաքսիմալ օբյեկտիվ պատասխանել այն հարցին, թե ովքեր են եղել պատմության ամենախելացի մարդիկ, գրեթե անհնար է: Սակայն մենք առաջարկում ենք ձեր ուշադրությանը մի քանի տասնյակ աշխարհի խելացի մարդկանց:

Այո, ի դեպ: Կար այդպիսի մարդ՝ Ուիլյամս Սիդիս: Նա, ըստ էության, եղել է սուպեր հրաշամանուկ, սակայն նրա մասին համարյա ոչ մեկը չգիտի, քանի որ նա չի տվել ոչ մի գործնական օգուտ ոչ մարդկանց, ոչ էլ գիտությանը:

Ներքևում ներկայացված ցուցակը բերված է հակադարձ ժամանակագրական կարգով, սկսված է Յեյզենբերգից՝ ծնված 1901թ. և ավարտված՝ մ.թ.ա. 6-րդ դարի մարդկանցով:

ՎԵՐՆԵՐ ԴԵՅՁԵՆԲԵՐԳ, ԳԵՐՄԱՆԻԱ



«Բնագիտության բաժակից առաջին կունը մարդուն դարձնում է աթեիստ, իսկ բաժակի հատակում նրան սպասում է Աստված»:

Յեյզենբերգը մեծ տեսական ֆիզիկոս է, քվանտային մեխանիկայի ստեղծողներից մեկը: 1932 թվին՝ Նոբելյան մրցանակի դափնեկիր: Յեյզենբերգը հիմնադրել է մատրիացային մեխանիկայի հիմքը, ձևակերպել է անորոշությունների հարաբերակցությունը: Նրա մի շարք աշխատանքներ նվիրված են տիեզերական ճառագայթների ֆիզիկային, տուրբուլենտության տեսությանը, բնագիտության փիլիսոփայական խնդիրներին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Յեյզենբերգը եղել է գերմանական միջուկային նախագծի առաջատար տեսաբան:

ՆԻԼՍ ԲՈՐ, ԴԱՆԻԱ



«Եթե քեզ չի վախեցրել քվանտային ֆիզիկան, ուրեմն, դու նրանում ոչ մի բան չես հասկացել»:

Նոբելյան մրցանակի դափնեկիր ֆիզիկայից: Նիլս Բորը եղել է Դանիայի թագավորական ընկերության անդամ, իսկ 1939 թվականից՝ նրա նախագահը: Եղել է Նոբելյան մրցանակի դափնեկիր ֆիզիկայից: Նիլս Բորը եղել է Դանիայի թագավորական ընկերության անդամ:


Նիլս Բորը ատոմի առաջին քվանտային տեսության հիմնադիրն է և քվանտային մե-

խանիկայի հիմունքների զարգացման ակտիվ մասնակից:

Նա նշանակալի ներդրում է ունեցել նույնպես ատոմի միջուկի և միջուկային ռեակցիայի տեսության զարգացման մեջ, շրջակա միջավայրի հետ տարրական մասնիկների փոխազդեցության գործընթացների հարցում:

ԱԼԲԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆ, ԳԵՐՄԱՆԻԱ

«Ինչ տխուր դարաշրջան է, երբ ավելի հեշտ է ջարդել ատոմը, քան հրաժարվել նախապաշարմունքներից»:




Էյնշտեյնը ամենահայտնի և հանրաճանաչ գիտնականներից է, ֆիզիկոս-տեսաբան, ժամանակակից տեսական ֆիզիկայի հիմնադիրներից մեկն է, Նոբելյան մրցանակի դափնեկիր ֆիզիկայից 1921թ.:

Էյնշտեյնը ֆիզիկայից 300-ից ավելի գիտական աշխատանքների հեղինակ է, նույնպես պատմության և փիլիսոփայության ոլորտներում՝ մոտ 150 գրքերի և հոդվածների, նա հարաբերականության ընդհանուր և հատուկ տեսությունների հեղինակն է, ներդրել է քվանտային տեսության հիմքերը, կանգնած էր գրավիտացիայի նոր տեսության ակունքներում, որը փոխարինեց Նյուտոնյան տեսությունը:

Էյնշտեյնը ֆիզիկայից 300-ից ավելի գիտական աշխատանքների հեղինակ է, նույնպես պատմության և փիլիսոփայության ոլորտներում՝ մոտ 150 գրքերի և հոդվածների, նա հարաբերականության ընդհանուր և հատուկ տեսությունների հեղինակն է, ներդրել է քվանտային տեսության հիմքերը, կանգնած էր գրավիտացիայի նոր տեսության ակունքներում, որը փոխարինեց Նյուտոնյան տեսությունը:

ՆԻԿՈԼԱ ՏԵՍԼԱ, ԱՎԱՏՐԻԱՎԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆ




«Ձեզ հայտնի՞ է արտահայտությունը՝ «Գլխից վեր չես թռչի»: Դա մոլորություն է: Մարդը կարող է ամեն ինչ»:

Տեսլային անվանել են մարդ, «որը ստեղծել է 20-րդ դարը»: Աշխատությունները վերբերում են ժ ա մ ա ն ա կ ա կ ի ղ

Էլեկտրատեխնիկային: ԱՄՆ-ում Տեսլան, ըստ ճանաչման, կարող էր մրցակցել ցանկացած գյուտարարի կամ գիտնականի հետ: Տեսլայի հանձարը յուրահատուկ բնույթ ուներ: Այսպիսով, ուսումնասիրելով երկրի ռեզոնանսային տատանումները, հանձարը ստեղծել է սարք, որն իրականում կարող է հրահրել երկրաշարժ:

ԴԱՄՏՐԻ ՄԵՆԴԵԼԵԵՎ, ՌՈՒՍԱՍԱՆ



«Նավթ վառելը նման է վառարանը թղթորդներով տաքացնելուն»:

Ռուս Դա Վինչին՝ տարրերի պարբերական համակարգի համադրող հայր Մենդելեևը, բազմակողմանի զարգացած գիտնական և հասարակական գործիչ էր: Այսպիսով, նա նշանակալի և անգնահատելի ներդրում է ունեցել նավթարդյունաբերության մեջ: Մենդելեևի շնորհիվ Ռուսաստանը կարողացավ ոչ միայն հրաժարվել Ամերիկայից կերոսինի ներմուծումից, այլ նաև նավթամթերք արտահանեց Եվրոպա: Մենդելեևը երեք անգամ առաջադրվել է Նոբելյան մրցանակի, բայց այնպես էլ չի ստացել:

ԻՅՈՂԱՆ ԳՅՈՑԵ, ՍՈՒՐԻ ԳՈՒՄԵԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆ



«Բոլոր հայերը ցանկանում են, որ իրենց երեխաները կատարեն այն, ինչ իրենք չեն կարողացել»:

Գյոթեն այսօր հայտնի է հիմնականում որպես փայլուն գրող և բանաստեղծ, բայց նա նաև ակադմիկոս, գիտնական էր: Նա կանգնած էր ֆիզիոգնոմիայի ակունքներում, լրջորեն զբաղվում էր քրոմատիկայով (ներկերի և գույների գիտությամբ), քիմիայով, բուսաբանությամբ և կենսաբանությամբ: Գյոթեն գրել է բազմաթիվ աշխատություններ փիլիսոփայության, երկրաբանության, աստղագիտության, գրականության և արվեստի վերաբերյալ: Գյոթեյի ամբողջական աշխատությունների 133 հատորներից 14-ը նվիրված են գիտական թեմաներին: Գյոթեի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ ունի գերմանական պոեզիայի զլուխգործոց «Ֆաուստ»-ը, որի վրա նա աշխատել է շուրջ 60 տարի:



Կանտը՝ գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիրը, 18-րդ դարի մեծագույն մտածողներից է, որը հսկայական ազդեցություն է ունեցել փիլիսոփայության զարգացման վրա: Նույնիսկ ճշտապահ գերմանացիների մոտ Կանտի հակումը խիստ առօրյայի և կարգապահության նկատմամբ առակ է դարձել: Ժամացույցները ստուգվում էին ըստ Կանտի, որը շրջում էր Քյոնիգսբերգի փողոցներով:

Բացի փիլիսոփայությունից Կանտը զբաղվում էր նաև բնական գիտություններով: Նա մշակեց արեգակնային համակարգի ծագման տիեզերական վարկածը՝ հսկայական գազային միգամածությունից, ուրվագծեց կենդանական աշխարհի ծագումնաբանական դասակարգման գաղափարը, առաջ քաշեց ցեղերի բնական ծագման գաղափարը, ուսումնասիրել է մակընթացությունների դերը:

Շարունակելի Ռ. ԱՍԱԶԵԼՅԱՆ ԱՐԴՅ Ֆիզմաթ ամբիոնի մ.գ.թ., պրոֆեսոր Լաուրա ԶԱԿՈՒԲՅԱՆ ավագ դասախոս

ԵՄԱՆՈՒԵԼ ԿԱՆՏ, ՊՐՈՒՍԻԱ

«Իմաստուն մարդը կարող է փոխել իր կարծիքը, հիմարը՝ երբեք»:

ՇՈՒՇԻ ՏԵՍՆՈԼՈԳԻԱՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԶԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՈՐՃՐԱԾ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՃԱՆԿ

Table with 6 columns: No, Name, ID, Institution, Year, and Graduation Date. It lists graduates of the Yeghayan Technical University.

Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՊԼՈՍՆԵՐԸ ԿՈՐՅՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՅՈՒՅԱԿ

Table with 5 columns: No., Name, Author, Year, and ISBN. Lists 25 books published by the Gregor Narekatsy Hayastan Library.

Համարել անվավեր:

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌԸ

19.08.2022թ. աճուրդը չի կայացել հայտ ներկայացված չլինելու պատճառով:

2022թ. սեպտեմբերի 16-ին, ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի կողմից Ստեփանակերտի Ազատամարտիկների 42 հասցեում՝ ԱԳ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի շենքում կանցկացվի «Մայակ» ՍՊԸ ԸԻԴ/0001/04/20 սնանկության գործով Լավրենտ Սերյոժայի Սիրզոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդ-վաճառք՝ բաց դասական եղանակով, 1 առանձին լոտով:

Լոտ 1 Բնակարան: Հասցե՝ ՀՀ, ք.Արևիկ, 3-րդ միկրոշրջան, 20 շենք, թիվ 19 բնակարան: Սեփականության վկայականի համար՝ 894201: Սեփականատեր՝ Լավրենտ Սերյոժայի Սիրզոյան: Գրավարված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Գույքի նկատմամբ գրանցված է գրավի իրավունք՝ Արցախի ներդրումային հիմնադրամում: Բնակարանը ծանրաբեռնված է բնակիչներով: Լոտի նկարագրությունը՝ Բնակարան, մակերեսը կազմում է 74,04 ք.մ: Բնակարանը գտնվում է 9-րդ հարկանի շենքի 1-ին հարկում: Հատակները՝ մանրատախտակ, մուտքի և ներսի դռները, ինչպես նաև պատուհանները՝ փայտյա, սանհանգույցի պատերը և հատակը սալիկապատված են: Ընդհանուր առմամբ բնակարանի ներքին հարդարումը միջին վիճակում է և 6 բալանոց (1-վատ վիճակ, իսկ 7-գերազանց) սանդղակով գնահատվում է 3: Սեկնարկային գինը 15.017.400,0 ՀՀ դրամ:

Գույքի սեփականության փոխանցման, պետական գրանցման և հնարավոր վտարման հետ կապված ծախսերը կատարում է գնորդը:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ֆիզիկական անձի դեպքում անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնբեռների դեպքում՝ պետական գրանցումը (հաշվառումը) հաստատող փաստաթղթերի պատճենները, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ նաև կանոնադրության և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,

բ/լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով, գ/աճուրդի նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը:

Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը: Աճուրդի մասնակից չի համարվող անձանց համար աճուրդի մուտքի վճարը սահմանվում է 5000 ՀՀ դրամ: Նախավճարը և մուտքի վճարը վճարվում են «Արցախբանկ» ՓԲԸ-ում «Մայակ» ՍՊԸ սնանկության հատուկ հաշվին՝

22301050288600:

Աճուրդին մասնակցել ցանկացողները և աճուրդի մասնակից չհամարվող անձինք մինչև 11.09.2022թ. ներառյալ կարող են աճուրդի մասնակցության հայտ ներկայացնել ԱԳ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում:

Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը, և այդ գինը համարվում է լոտի վաճառքի գին: Լոտի վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված: Աճուրդի հաղթողի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում նախավճարը հետ չի վերադարձվում:

Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավորվում է աճուրդի արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը՝ նվազեցնելով վճարած աճուրդի նախավճարի չափը: Հաղթող մասնակցի կողմից աճուրդի արձանագրությունը չստորագրելու կամ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ գույքի արժեքը չվճարելու դեպքում որպես նախավճար մուծված գումարը չի վերադարձվում:

Եթե համապատասխան հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա նրա կողմից վճարված նախավճարը ենթակա է վերադարձման:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար սնանկության հատուկ հաշվին նախօրոք մուծվում է պատճենահանման ծախս՝ 100 ՀՀ դրամ կամ 097222922 համարին կարճ հաղորդագրությամբ ուղարկվում է էլեկտրոնային փոստի հասցեն, որի վրա սնանկության գործով կառավարիչը ուղարկում է աճուրդի կանոնակարգը:

Վաճառվող գույքի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու, ուսումնասիրության և աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանին 097222922 կամ 093 892279 հեռախոսահամարներով:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌԸ

18.08.2022թ. աճուրդը մասնակի չի կայացել:

«Սնանկության մասին» ԱԳ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2022թ. սեպտեմբեր 15-ին՝ ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի կողմից ԱԳ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ-վաճառք՝ հետևյալ լոտերով:

ԼՈՏ 1՝ Կաթսայատուն (փաստացի հացի արտադրամաս): Սեփականու-

թյան վկայականի համար՝ 115352: Սեփականատեր՝ Էդգար Լավրենտի Սիրզոյան: Գրավարված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ շենքի մակերեսը կազմում է 166,16 ք.մ, հողամասի մակերեսը կազմում է 307,0 ք.մ: Վիճակը՝ նորմալ: Հասցե՝ ԱԳ, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների փ. ք.52/11: Սեկնարկային գին 7.654.605 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպքում՝ պետ.գրանցումը հաստատող

փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիրապետական» մ/դ հ/հ 22301050288600:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները, աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00-ն, կարող են հայտ ներկայացնել ԼԳՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին հեռ.՝ 097-22-29-22 կամ 093-89-22-79:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԿՈՐԵԼ Է

Ավարդ Աշոտի Գասպարյանի դիմումը՝ տրված Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջից, որտեղ նա սովորել է 2005-2009թթ., մնացել է Ադրբեյջանի կողմից օկուպացված Քարին տակ գյուղում:

Համարել անվավեր:

Advertisement for 'LUSARAR' (ՀԱՅՏԱՐԱՐ) featuring contact information for the library and a list of services provided.

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: